ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

խոսույթներ և պրակտիկաներ

Աղասի Թադևոսյան

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԽՈՍՈՒՅԹՆԵՐ և ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐ

Աղասի Թադևոսյան, Մշակութային մարդաբան,
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Բովանդակություն

Ներածություն 4

Գլուխ 1. Բարոյականության և սեքսուալության ընկալումներն ու խոսույթները 8

1.1.Կնոջ բարոյականության և սեռականության հարցը 9

1.2.Տղամարդու բարոյականության ու սեռականության խնդիրը 20

1.3.«Կոմպրոմիսային» կամ բացառություն կազմող մեկնաբանություններ 26

Գլուխ 2. Բարոյականության ու սեքսուալության պրակտիկաները 29

2.1. Միջսեռային փոխհարաբերություններում աղջիկների հանդեպ վերահսկողական պրակտիկաները 29

2.3. Կանացի և տղամարդկային սեռականության իրացման պրակտիկաները և դրանց բարոյականացման առանձնահատկությունները 38

2.3.1. Կանանց սեռական կյանքի պրակտիկաները 38

2.3.2. Տղամարդկանց սեռական կյանքի պրակտիկաները 42

2.3.3 Հասարակության մեջ առկա հիմնական խմբերը ըստ բարոյական ընկալումների և պրակտիկաների 53

Բարոյական խոսույթները և հասարակական համակեցության ներկա հիմնախնդիրները. Հումանիստական խոսույթի կարևորությունը (եզրակացության փոխարեն) 57

Ներածություն

Բարոյականության և սեռականության հիմնախնդիրները մեզնում քիչ ուսումնասիրվածներից են: Այդ անտարբերությունը որոշ առումով գալիս է խորհրդային ժամանակներից: Խորհրդային Միությունում բարոյականության խոսույթները և պրակտիկաները ձևակերպվում էին կուսակցական վերնախավերում և սոցիալական գիտություններին տրվում էր ոչ այնքան հետազոտական, որքան կուսակցական ճշմարտությունները տիրաժավորողի դերակատարում: Հետխորհրդային շրջանում հասարակական գիտությունների դերի հանդեպ անտարբերությունը շարունակվեց և կարևոր հիմնախնդիրներ մնացին հետազոտական դաշտից դուրս: Միայն վերջին տարիներին այս խնդիրները հայտնվեցին հետազոտողների տեսադաշտում և իրականացվեցին մի շարք հետաքրքիր հետազոտություններ: Վերլուծությունը գրելու ընթացքում «Սոցիոսկոպ» հետազոտական կենտրոնի կողմից հրապարակվեց «Սեռականությունը հայկական համատեքստում» վերնագրով հսկայածավալ և խիստ արժեքավոր աշխատությունը[1], որտեղ ամփոփված են հին ու միջնադարյան շրջանից մինչև 20-րդ դարի գրավոր աղբյուրներում արտացոլված սեռականության խնդրին վերաբերող նյութերն ու դրանց վերլուծությունը (Անդրեասյան, Ժամկոչյան, Մանուսյան 2019): Վերջին հետազոտություններից կարևոր է հիշատակել նաև «Առօրյայի անտեսանելի կողմը. Գենդերային կարծրատիպերը կենցաղում» մենագրությունը[2], (Առօրյայի անտեսանելի կողմը, 2018) «Ծնողների դիրքորոշումները դեռահասների սեռական զարգացման վերաբերյալ»[3], «Առողջ ապրելակերպը դասավանդող ուսուցիչների դիրքորոշումները սեռական դաստիարակության թեմայի վերաբերյալ» հետազոտությունները[4]:

Ներկայացված խնդրին որոշ անդրադարձներ կան նաև երիտասարդության հիմնախնդիրներին նվիրված մի շարք հետազոտություններում: Առանձնապես հետաքրքիր է «Անկախության սերունդ. Հետազոտություն երիտասարդության շրջանում» աշխատությունը, որտեղ կարելի է գտնել երիտասարդության արժեքներին ու

---

[1] Անդրեասյան Ժ., Ժամկոչյան Ա., Մանուսյան Ա., Սեռականությունը հայկական համատեքստում, Երևան, 2019:

[2] Առօրյայի անտեսանելի կողմը. Գենդերային կարծրատիպերը կենցաղում, Երևան, 2018:

[3] Շահնազարյան Գ., Հովհաննիսյան Ս., Ծնողների դիրքորոշումները դեռահասների սեռական զարգացման վերաբերյալ, http://www.ysu.am/files/Parents%20Report%20Final%20(2).pdf?fbclid=IwAR1ihCGx_9boTjZmsjFM19uzedDVZ2pTbXsqH5gAcv-nBwS4zo0LfHAPDT8

[4] Առողջ ապրելակերպը դասավանդող ուսուցիչների դիրքորոշումները սեռական դաստիարակության թեմայի վերաբերյալ: http://www.ysu.am/files/Sex-ed_Teacher2018_WRC_CGLS.pdf?fbclid=IwAR2m4jEYoLcRZnuv_kJoaA59q16lXnNssrR8QUeZnRLYECQGrzDdMWCUMLM

կողմնորոշումներին նվիրված ուշագրավ նյութեր (Մկրտիչյան, Վերմիշյան, Բալասանյան, 2016)[5]: Ուշագրավ է նաև «Ապագա ունենալու իրավունքը. Հայաստանը վերափոխող երիտասարդությունը» ՄԱԶԾ 2018-2019 զեկույցը (Գալստյան, Թադևոսյան, Խաչատրյան, Հարությունյան, 2019)[6]:

Ներկայացվող հետազոտությունը փորձ է նախաձեռնելու և հետաքրքրություն առաջացնելու այս խնդրի շուրջ մի քանի նպատակով: Նախ, բարոյական ընկալումներն ու խոսույթները հիմնարար նշանակություն ունեն հասարակական համակեցության կազմակերպման, հասարակական ու մշակութային բարեկեցիկ միջավայրի, հանրային բարիքների և ընդհանրապես արդյունավետ ու միջազգային մակարդակով մրցունակ հասարակության ու պետության ձևավորման համար: Բարոյական նորմերը, խոսույթներն ու պրակտիկաները կարող են համախմբել հասարակությանը և նպաստել նրա կառուցողական ու ստեղծարար ներուժի բացահայտմանը, զարգացմանը, ինքնաիրականացմանն ու համաշխարհային մակարդակով դերակատար դառնալուն, ինչպես նաև, հակառակը՝ կարող են տանել հասարակությանը դեպի խավարամտություն, անկում, դեստրուկտիվ ու ավտորիտար ուժերի գերիշխանության հաստատման, հասարակության ծայրահեղ բևեռացման, շահագործման, առաջադեմ աշխարհից ու համաշխարհային զարգացման գործընթացներից մեկուսացման և ինքնիշխանության կորստի:

Այս առումով շատ կարևոր է հասկանալ, թե ինչպիսին են բարոյականության մեր ընկալումները, խոսույթները, տարածված պրակտիկաները: Հետազոտության նախապատրաստման ու նախնական դիտարկումների ընթացքում ակնհայտ դարձավ, որ հասարակության որոշակի շրջանակներում բարոյականության մեկնաբանությունները խիստ կապի մեջ են անձի սեռականության ընկալումների հետ: Հասկանալի էր, որ այս երկու խնդիրները մեզանում խիստ փոխկապված են ընկալվում, և անհրաժեշտ է դրանք հետազոտել հենց փոխկապվածության մեջ:

Նպատակը և խնդիրները. Հետազոտության լայն նպատակն է եղել ուսումնասիրել ներկայիս հայ հասարակության համար բարոյականության առանցքային ընկալումները, որոնք պայմանավորում են մարդկանց վարքագիծը ինչպես անհատական, այնպես էլ հասարակական տեսանկյունից, և դրա փոխառնչակցությունը սեռականության խնդրին:

Նեղ առումով կարևորվել է մի կողմից բարոյականության ու մարդկային հատկանիշների, մյուս կողմից՝ մարդկանց սեռական վարքագիծը կանոնակարգող և դրանք բարոյականացնող նորմերի, խոսույթների ու պրակտիկաների, դրանց ներկա փոխակերպումների ուսումնասիրությունը:

Այս նպատակներից բխող *հիմնական խնդիրներն* են եղել.

---

[5] Մկրտիչյան Ա., Վերմիշյան Հ., Բալասանյան Ս., Անկախության սերունդ. Հետազոտություն երիտասարդության շրջանում, Երևան, 2016:

[6] Ապագա ունենալու իրավունքը. Հայաստանը վերափոխող երիտասարդությունը» ՄԱԶԾ 2018-2019 զեկույց, Երևան, 2019:

- Ուսումնասիրել բարոյականության մասին մարդկանց մեջ տարածված հիմնական ընկալումները, խոսույթներն ու պատկերացումները:
- Հետազոտել անհատական ու հասարակական վարքագիծը և համակեցությունը կանոնակարգող բարոյական նորմերն ու պրակտիկաները:
- Ուսումնասիրել մարդկանց սեռական վարքագիծը կանոնակարգող բարոյական նորմերը, խոսույթներն ու պրակտիկաները:
- Հետազոտել բարոյականության և սեռականության տարբեր ընկալումներ ու պրակտիկաներ կրող խմբերի միջև փոխհարաբերությունները, նրանց միջև համակեցությունը հնարավոր դարձնող կամ կոնֆլիկտներ ձևավորող պրակտիկաները:
- Ուսումնասիրել տղամարդկանց և կանանց սեռականության ու բարոյականության հետ կապված խոսույթների և պրակտիկաների տարբերություններն ու ընդհանրությունները:
- Վեր հանել սեռականության սահմանման և սեռական վարքագիծը կանոնակարգող նորմերի, խոսույթների ու պրակտիկաների մեջ անհավասարություն, խտրականություն և բռնություն ծնող, նորմալիզացնող բաղադրիչները, դրանց հիմնական պատճառները և դերակատարներին:
- Ուսումնասիրել բարոյականության ներկայիս ընկալումների, վարքագծային պրակտիկաների ազդեցությունը հասարակական համակեցության ձևերի վրա, դրանց դեստրուկտիվ և կոնստուրկտիվ կողմերը և փորձել վեր հանել այն հիմնական խնդիրները, որոնք այսօր կարևոր են մի կողմից, մեր հասարակական կյանքում ներդաշնակություն, հանդուրժողականություն և կառուցողական դերակատարություն ունեցող խոսույթների ու պրակտիկաների խրախուսման, և մյուս կողմից՝ խտրական, ագրեսիվ, կոնֆլիկտային, հարկադիր ենթակայական խոսույթների ու պրակտիկաների դերի նվազեցման գործում:

Մեթոդաբանությունը. Հետազոտությունն իրականացվել է որակական հետազոտական մեթոդներով: Անցկացվել են 33 անհատական խորացված, 12 փորձագիտական հարցազրույցներ, 2 ֆոկուս խումբ ու ներգրավված դիտարկումներ: Հարցազրույցներն իրականացվել են Երևան քաղաքում, մեկ միջին քաղաքում՝ Գյումրիում, և չորս փոքր քաղաքներում՝ Արմավիրում, Արթիկում, Սիսիանում և Իջևանում: Հարցազրույցներ են իրականացվել նաև երեք գյուղական բնակավայրերում:

Փորձագիտական հարցումներն իրականացվել են հասարակագիտության, մշակութային մարդաբանության, հոգեբանության, մարդու իրավունքի ոլորտի մասնագետների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Ֆոկուս խմբային հարցումներն իրականացվել են ուսանողների միջավայրում: Ֆոկուս խմբերից մեկն իրականացվել է խառը սեռային կազմով՝ 20-25 տարեկանների խմբում, հասարակագիտական մասնագիտացմամբ մագիստրոսական կրթություն

ստացողների մեջ: Երկրորդը՝ 18-21 տարիքային խմբում, ճշգրիտ գիտությունների մասնագիտացմամբ բակալավրի կրություն ստացող տղա ուսանողների մեջ:

Հետազոտության ընտրանքն իրականացվել է ըստ սեռատարիքային, սոցիալ-մասնագիտական զբաղվածության և կրթական գործոնների: Կին–տղամարդ հարաբերակցությունը կազմել է մոտավորապես 55–45 %:

Հետազոտությունն իրականացվել է սոցիալ-մշակութային մարդաբանության մեթոդների ու վերլուծության համատեքստում: Հեղինակն իրականացրել է գրանցված դաշտային նյութերից բխող վերլուծություն՝ աշխատելով հնարավորինս մնալ այն բովանդակության շրջանակներում, ինչը հնարավոր է դուրս բերել գրանցված որակական հետազոտական տվյալներից: Այսինքն, որպես հետազոտող գլխավորապես առաջնորդվել է տեսքտի վերածել այն, ինչի մասին որ պատմում է գրանցված հետազոտական նյութը: Այդ պատճառով հնարավորինս խուսափել է նաև բարոյականության և սեռականության վերաբերյալ տարբեր ձևակերպումներից, տեսականացումներից՝ նախընտրելով այն բացատրություններն ու ընկալումները, որոնք տալիս են դաշտային հետազոտական նյութերը:

Գլուխ 1. Բարոյականության և սեքսուալության ընկալումներն ու խոսույթները

Հետազոտության հիմնական հարցադրումներից մեկը վերաբերում է այն հարցին, թե ի՞նչ են հասկանում մարդիկ «բարոյականություն» ասելով, և ինչպիսի՞ տարբեր մեկնաբանություններ կան այս խնդրի շուրջ: Գրանցված որակական նյութերի վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ բարոյականության ընկալումների առումով հայաստանյան հասարակությունը չափազանց տարբերակված է և ներկայումս գտնվում է ընթացիկ փոփոխությունների մեջ:

Ըստ գրանցված նյութերի կարելի է առանձնացնել բարոյականության ընկալումների երեք մեծ խումբ.

1. Սեռականության գործոնի վրա հենված բարոյականության ընկալումներ:
2. Մարդկային հատկանիշների հիմքի վրա բնորոշվող բարոյականություն:
3. Անցումային ու խառը ընկալումներ:

Առաջին խումբ ընկալումներում բարոյականությունը ընկալվում և մեկնաբանվում է բացառապես մարդու սեռական վարքագծի հետ կապված գործոններով: Դրանում հատկապես թիրախավորվում է կնոջ ինքնուրույն սեռական կյանքի իրավունքը: Սեփական սեռականության իրացման միակ թույլատրելի ճանապարհը կնոջ համար համարվում է ամուսնական կյանքը: Տղամարդու սեքսուալ վարքագիծն այդքան էլ թիրախավորվող երևույթ չէ, չնայած, շատ հազվադեպ ու որոշակի դեպքերում այն նույնպես բարոյականացվում է: Հատկանշական է, որ կանացի սեքսուալության գործոնով պայմանավորված բարոյականության դիսկուրսում մարդկային հատկանիշների գործոնը՝ որպես անհատի բարոյական նկարագրի վրա ազդող գործոն, դեր չի խաղում:

Երկրորդ խմբի բարոյականության ընկալումները արմատականորեն տարբերվում են առաջինից: Այստեղ անհատի սեռական վարքագիծը համարվում է նրա անձնական կյանքի ու անձնական տարածքի խնդիրը, որին միջամտելը համարվում է անընդունելի: Մարդու բարոյական նկարագիրը կազմող բաղադրիչներ են համարվում այնպիսի հատկանիշները, որոնք նպաստում են այլ մարդկանց և հասարակության հանդեպ դրական վերաբերմունքի, բարյացակամության, երջանկության և բարեկեցության բարձրացմանը: Նման հատկանիշներ են համարվում ազնվությունը, արդարությունը, բարությունը և այլ դրական հատկանիշներ:

Երրորդ խմբի ընկալումները հիմնականում առաջինից դեպի երկրորդը անցումային կամ միջանկյալ բնույթի են: Դրանցում հաճախ կարևորվում են կնոջ

սեքսուալ կյանքի սահմանափակումները, սակայն որոշ դեպքերում թույլ են տրվում արդարացումներ ու բացառությունների հնարավորություն:

1.1.Կնոջ բարոյականության և սեռականության հարցը

Բարոյականության ընկալումներում և մեկնաբանություններում առավել տարածված է այն կնոջ սեռական վարքագծի հետ կապելը: Այս պատկերացումն այնքան է արմատավորված, որ հաճախ «բարոյականություն» բառը ամբողջովին նույնականացվում է կնոջ սեռական վարքագիծը սահմանափակող և պիտակավորող մեկնաբանությունների հետ:

Կնոջ սեռական վարքագծի բարոյականացումը կապված է այն սահմանափակող սոցիալական նորմերի հետ, որոնց խախտումը համարվում է անբարոյականություն և տարածվում ոչ միայն կնոջ, այլև իր ընտանիքի ու առաջին հերթին՝ ընտանիքի տղամարդ անդամների վրա: Համաձայն տարածված ընկալումների բարոյական համարվում են այն աղջիկները, ովքեր ոչ միայն մինչև ամուսնությունը պահպանել են իրենց կուսությունը, այլև հանրային տարածքներում տղաների ու տղամարդկանց միջավայրում իրենց պահվածքով թույլ չեն տվել գայթակղիչ որևէ արարք, որը կարող է կասկած առաջացնել, որ տվյալ աղջիկը փորձում է սեքսուալ առումով գրավել շրջապատի տղամարդկանց ուշադրությունը: Այսինքն, ըստ բարոյականության մասին այս խոսույթի՝ բարոյականությունը կապվում է կնոջ սեքսուալության լիակատար ժխտման հետ և դրա հանգեցմանը բացառապես նրա վերարտադրողական գործառույթին:

Ինչպես ցույց են տալիս հետազոտության նյութերը, կնոջ վարքագծի բարոյականացումը, հատկապես հասարակության պահպանողական հայացքներով բնութագրվող միջավայրերում, կարևոր գործոն է դառնում նաև տղամարդու նկարագրի և տղամարդկանց միջավայրում ու ընդհանրապես հասարակական որոշակի շրջանակներում կարգավիճակի ձևավորման առումով: Դա է համարվում պատճառը, որ կնոջ սեռական վարքագիծը համարվում է ոչ թե նրա անձնական գործը, այլ ողջ ընտանիքի, ազգակցական ու երբեմն նույնիսկ թաղային և համայանքային միջավայրերի:

Հետաքրքիր է նկատել, որ կանացի սեռական վարքագծի բարոյականացումը հատկապես տարածված ու քննադատվող երևույթ է փակ խմբային և մեխանիկական համերաշխության գործոնով պայմանավորված հասարակական միջավայրերում[7]: Այսինքն՝ առավելապես ազգակցական կամ հարևանական բնույթի միջավայրերում: Աշխատանքային կամ մասնագիտական միջավայրերում, չնայած դա երբեմն կարող է

[7] Մեխանիկական համերաշխության եզրույթը վերցված է Է.Դյուրքայմից (Дюркгейм Э. 1996, 77-118)

դառնալ քննարկման կամ բամբասանքի առարկա, սակայն մարդու աշխատանքային ճակատագրի վրա որոշիչ դերակատարություն չի կարող ունենալ:

Հենվելով իրականացված հետազոտության տվյալների վրա, կարելի է առանձնացնել կնոջ բարոյականության ու սեքսուալության հետ կապված հետևյալ հիմնական պատկերացումներն ու պատումները (նարատիվներ).

1. *Աղջիկը մինչև ամուսնանալը պետք է կույս լինի:*
2. *Հասուն՝ երեսունին մոտ տարիքում աղջիկների համար սեքսուալ կյանք ունենալը կարող է արդարացվել, եթե նա ունենում է մշտական զուգընկեր, այլ ոչ թե անկանոն ու բազմազան սեքսուալ հարաբերություններ*:
3. *Եթե աղջիկը «ճակատագրի բերումով» կորցրել է կուսությունը, դա ընդունելի չէ, սակայն կարող է անբարոյականություն չհամարվել:*
4. *Անկանոն և բազմազան սեռական կյանք վարող աղջիկները համարվում են անբարոյական:*
5. *Վճարովի սեռական ծառայություններ մատուցող կանայք և աղջիկները համարվում են անբարոյական:*
6. *Կնոջ և ընդհանրապես մարդու սեռական կյանքը իր անձնական կյանքի իրավունքն է, և դրա հիման վրա նրան բարոյական կամ անբարոյական համարելը սխալ է:*
7. *Կնոջ մարմինը նրա սեփականություն է, այն տղամարդու սեփականությունը չէ, և կինն ազատ է իր մարմինը տնօրինել ինքնուրույն:*

Փորձենք մի փոքր մանրամասնել ներկայացված պատկերացումներն ու պատումները:

Կնոջ սեքսուալությունը բարոյականացնող *«աղջիկը մինչև ամուսնանալը պետք է կույս լինի»* պատումը ունի իրեն բնորոշող մեկնաբանությունները, որոնց միջոցով կազմավորվում է պատումի հիմնական բովանդակությունը: Մեկնաբանություններից մեկը կապվում է մաքրության ու առաքինության գաղափարի հետ: Ըստ այդմ՝ չամուսնացած աղջկա համար սեքսուալ փորձառությունը պիտակավորվում է որպես «փչացվածություն»: Խիստ պահպանողական ընկալումների համաձայն՝ աղջիկը «մաքուր» է, եթե նա ոչ միայն որևէ մեկի հետ սեռական կապ չի ունեցել, այլ նաև տղաներից եղել է բավականաչափ դիստանցավորված, մնացել է սահմանված վարքագծային նորմերի շրջանակում և, ինչպես ընդունված է ասել, մինչև ամուսնանալը նաև ոչ մեկի հետ ընկերություն չի արել.

Ինքը հիմա խոսքի օրիորդ իրեն պահեց, բայց սիրում ա տղերքի հետ ընկնի, իրան ձեռ գցեն, ինքը ձեռ գցի, լպիռշություն լինի, էդի կապ չունի հիմա ինքը օրիորդ ա, թե չէ, արդեն ինքը լոջկված աղջիկ ա... զսպվածությունն ա կարևոր: Թե չէ կարա իրան պահի ազապ, մի կերպ գնա ամուսնանա, բայց ամեն ինչ էլ հետո անի, որտև ինքը արդեն սովոր ա էդ ջրիկությանը: Թույլ տա իրեն ձեռ գցեն, ինքը ձեռ գցի, ստեղ գնա, ընդեղ գնա, բայց իրան օրիորդ պահի:

Կին, մարզային փոքր քաղաք, 36 տարեկան,
ամուսնացած

Հատկապես, մարզային բնակավայրերում այս երևույթը խիստ կարևորվում է, քանի որ որևէ մեկի հետ ընկերություն արած աղջիկը վտանգում է իր ճակատագիրը: Խնդիրն այն է, որ փոքր համայնքներում բոլորը միմյանց ճանաչում են, ու որևէ մի տղայի սիրահարված և պարզապես հանդիպումներ ունեցած աղջկան կարող են համարել ամուսնության համար ոչ ցանկալի, քանի որ դա կդառնա բամբասանքների և այդ աղջկա հետ ամուսնացած տղայի պատվարժանության վրա լուրջ բիծ:

Աղջկա համար մինչամուսնական սեռական հարաբերությունների անթույլատրելիության ու կուսության պահպանման մեկ այլ հիմնավորում է ծնողների, եղբոր և ընդհանրապես հայրական ընտանիքի պատվի գաղափարի հետ այն կապելը: Ընդհանրապես, ընտանիքի տղամարդկանց պատվի առաջնային ցուցիչ է ընտանիքի կին անդամների հանդեպ նրանց իշխանության ամրությունն ու կայունությունը, որի առաջնային բնութագրիչ են համարվում ընտանիքի կանանց սեռական կյանքի սահմանափակումները: Այս առումով՝ աղջկա կողմից մինչամուսնական սեռական կապը կամ սեքսուալությունը ցուցադրող ու շեշտադրող վարքագիծը կարող էր խաթարել ընտանիքի տղամարդկանց կարգավիճակը համայնքի տղամարդկանց միջավայրում ու դառնալ ընտանիքի պատվազրկման պատճառ: Կարևոր է համարվում նաև աղջկա ապագա ամուսնու պատվի հետ կապվող պատճառաբանությունը: Սրա հիմնական բացատրությունն այն է, որ միայն մինչև ամուսնությունը իրեն «մաքուր» պահած աղջկա ամուսինը կարող է հպարտ ու արժանապատիվ կերպով դուրս գալ տղամարդկանց միջավայր՝ համայնքում, բակում, թաղամասում կամ ընկերության մեջ, քանի որ տղամարդու արժանապատվության առանցքային բաղադրիչն է համարվում նրա հետ ամուսնացած աղջկա ինչպես կույս լինելը, այնպես էլ անվան շուրջ նրա սեքսուալ վարքագծի հետ կապված բացասական բնութագրումների ու ասեկոսեների բացակայությունը: Այդ պատճառով տղաների մեջ տարածված պրակտիկա է, մինչև աղջկա հետ ամուսնական նպատակով ծանոթության ու փոխհարաբերությունների հաստատումը, թաղամասի, դասարանի և աղջկա միջավայրը կազմող այլ տղաների հետ

հանդիպելը և այսպես ասած «ճշտվելը»: Վերջինս նշանակում է ստանալ աղջկան ճանաչող տղաների հավաստումը աղջկա «մաքուր» լինելու մասին, քանի որ ինչպես արդեն բազմիցս նշվեց «մաքուր» կամ, ինչպես ընդունված է ասել, «ման եկող» չլինելը աղջկա բարոյական նկարագրի համար հիմնարար է.

Ինքը մտածումա, որ իրա հերը չի թողի ինքը ընկեր բան ունենա, ինքը էդ ուղղությամբ չի մտածում...հա կարող ա սիրահարվի իրա մեջ, տվայտվի բան, կարող ա տրամադրության խորը անկում ունենա, մենք հասկանում ենք ինչ ա կատարվում...ինքը սիրահարվում ա, բայց հո չի արտահայտվի բան, կգա ինձ կասի բան, ես իրան ասում եմ հլը վախտը չի Աննա ջան: Պիտի ինքը մաքուր լինի, անարատ, մինչև ամուսնանալն էլ, էտի հաստատ...:

Կին, մարզային փոքր քաղաք, 37 տարեկան:

Ինչպես տեսնում ենք այս հարցազրույցից, հանուն պահպանողական բարոյական ընկալումների՝ աղջիկները կարող են և պարտավոր են ճնշել իրենց մեջ շատ խորը և դրական մարդկային զգացմունքներ, ընկնել ընկճախտի ու մարդու առողջության վրա բացասաբար ազդող հոգեվիճակների մեջ, կրել հոգեբանական տրավմաներ, արգելակել զգացմունքային տեսանկյունից ինքնարտահայտվելու մղումը: Կարևորը տղաներից դիստանցավորվածությունն է և համանքում վարկը պահելը, որպեսզի տղաները համարեն նրանց ամուսնության համար պիտանի և ամուսնանան: Թե ինչ է հետո լինում այդ աղջիկների հետ ամուսնանալուց հետո, հոգեբանական տեսանկյունից ինչպիսի մարդ է նա դառնում, ինչպես է ազդում դա հետագայում նույն ամուսնական հարաբերությունների, երեխաների դաստիարակության և այլ կարևոր խնդիրների վրա, պահպանողական դիսկուրսը կրող միջավայրերում կարծեք թե մարդկանց չի հետաքրքրում, քանի որ նրանցից շատերը առանձնապես չեն էլ կարևորում նշված հումանիստական խնդիրները՝ ստորադասելով մարդու արժեքը ընդունված հասկացություններով ապրելու հրամայականին:

Աղջկա «մաքուր» լինելու մասին պատկերացումը, ըստ գրանցված նյութերի, կապվում է ոչ միայն տղամարդու պատվի ու արժանապատվության, այլ նաև այն բացատրության հետ, ըստ որի աղջկա կյանքի առաքելությունը մայր դառնալն է, իսկ մայրությունը ենթադրում է ֆիզիկապես առողջ ու առաքինի մարմին ունանալ: Այս առումով կարևոր է համարվում, որ աղջիկը իր կյանքում միայն մեկ տղամարդ ունենա և սեռական հարաբերություն ունենա այդ մեկ տղամարդու հետ, որը կլինի իր ամուսինը: Այդ պատճառով կուսության պահպանումը մինչև ամուսնություն համարվում է աղջկա

ընտանիքի համար կարևոր խնդիրներից մեկը, որի համար պատասխանատու են ինչպես տղամարդիկ, հայրն ու եղբայրները, այնպես էլ մայրը: Մոր դերն այստեղ կարևորվում է աղջկա հասունության շրջանում բացատրական աշխատանքի միջոցով սեփական սեքսուալությունը միայն մայրության ու վերարտադրողական գործառույթի համատեքստում սահմանելուն, հնարավորինս սահմանափակելուն: Աղջկա հետ տարվող ողջ բարոյախոսական աշխատանքն ուղղված է բարոյական տեսանկյունից անթույլատրելիության հասցնելու կանացի սեքսուալությունը զգացմունքային ու մարմնական հաճույք ստանալու համատեքստում պատկերացնելու հնարավորությունը: Հաճախ դա մեկնաբանվում է այնպիսի ձևակերպումներով, որպեսզի աղջիկ երեխաների մոտ դրա նկատմամբ նաև ձևավորվի հակակրանք, հաճույքի մասին մտածելուց նաև մեղքի ու ամոթի խորը զգացումներ: Այս բարոյախոսական և դաստիարակչական աշխատանքի միջոցով տարիների ընթացքում պահպանողական միջավայրերում աղջիկների մոտ ինտերնալիզացվում[8] են ընդունված բարոյական նորմերն ու հասկացությունները, և դրանց կողմից թելադրվող արտաքին անհրաժեշտությունը վեր է ածվում ներքին անհրաժեշտության: Այսինքն՝ ստացվում է այնպես, որ սեփական սեռականության իրականացման անհրաժեշտությունը ստորադասվում է այն տղամարդու սեռականության իրականացման օբյեկտ դարձնելուն, և դաստիարակչական մեխանիզմների միջոցով դա դարձվում է աղջիկների ներքին անհրաժեշտությունը: Ներքին անհրաժեշտություն դառնալու դեպքում կանայք ոչ միայն արդեն իրենք են դառնում սեփական սեքսուալության սահմանափակմանն ուղղված վերահսկողությունն իրագործողը, այլև մի կողմից այդ բարոյականության և պրակտիկաների փոխանցողը մյուս սերնդին, մյուս կողմից՝ նաև մնացած կանանց ու աղջիկների հանդեպ վերահսկողություն իրականացնողներ[9]:

Բարոյականության ու սեքսուալության այս ընկալումը Հայաստանի բնակչության մեջ տարածվածներից է: Այն առավելապես բնորոշ է պահպանողական միջավայրերին և տարածված է մարզային քաղաքներում, գյուղական բնակավայրերում և Երևանի թաղային ու բակային միջավայրերում փակ, խմբային վարքագծային նորմերով ապրող բնակչության մեջ: Բարոյականության ու սեքսուալության ընկալումների այս տիպը, սակայն, չի կարելի համարել Հայաստանի ողջ բնակչության համար խիստ բնորոշ երևույթ: Հատկապես մարդակենտրոն արժեհամակարգ ունեցող շրջանակների համար առաջնային է համարվում անհատի անձնական կյանքի իրավունքի հանդեպ հարգանքը՝

[8] Ինտերնաիլիզացիան հոգեբանական այն գործընթացն է, որի միջոցով հասարակական նորմերն ու պրակտիկաները յուրացվում և ստանում են անհատական բնույթ:

[9] Արտաքին անհրաժեշտությունը ներքին անհրաժեշտություն վերածելու մեխանիզմների մասին հետաքրքիր դիտարկումներ ունի Ն.Էլիասը՝ տես. Norbert Elias, The court of society, Oxford: Basil Blackwell, 1983.

յուրաքանչյուր մարդու սեքսուալ կյանքը համարելով նրա անձնական գործը, ինչը այլ մարդկանց կողմից քննարկելը համարվում է էթիկապես ոչ կոռեկտ ու անթույլատրելի արարք: Այստեղ մարդու բարոյական նկարագրի մասին գնահատականները ձևավորվում են ոչ թե նրա սեռական կյանքի ու սեքսուալության հետ կապված վարքագծի գնահատման հիման վրա, այլև մարդկային դրական հատկանիշների, այլոց հանդեպ դրական վերաբերմունքի, նրա կողմից ստեղծվող դրական արդյունքի հիման վրա: Այս խնդրին ավելի մանրամասն կանդրադառնանք քիչ անց:

Լայն առումով, եթե բնութագրենք ըստ կնոջ սեքսուալության կառուցվող բարոյականության ընկալումները, ապա կարելի է առանձնացնել խիստ ծայրահեղ և համեմատաբար չափավոր մոտեցումները: ***Առաջին խումբը*** նրանք են, ովքեր աներկբայորեն հավատում են բարոյական այդ ընկալումների ճշմարտացիությանը և որևէ կերպ կասկածի տակ չեն դնում դրանք: ***Երկրորդ խումբն*** այն է, որ չնայած համարում է, որ այս մոտեցումը ճիշտ է, սակայն չի ընդունում դրա ծայրահեղացված տարբերակը: Նրանք համարում են շատ ծայրահեղ այն մոտեցումը, ըստ որի ***աղջիկները ոչ միայն պետք է կույս լինեն մինչև ամուսնանալը, այլև պետք է որևէ տղայի հետ սիրային կամ ընկերական հարաբերություններ ունեցած չլինեն***: Նրանք գտնում են, որ աղջիկը կարող է սիրահարված լինի կամ ընկերներ ունեցած լինի մինչև ապագա ամուսնու հետ հանդիպելը, դա չի կարող բացասաբար ազդել նրա բարոյական բնութագրի վրա: Սակայն, ***կարևոր է համարվում, որ աղջիկն ամեն դեպքում մինչամուսնական սեռական կյանք ունեցած չլինի***: Նկատենք նաև, որ առաջին մոտեցումն ավելի տարածված է մարզային բնակավայրերում, իսկ երկրորդը՝ Երևանում բնակվողների միջավայրում:

Արդեն հասուն՝ երեսունին մոտ տարիքում կանանց համար սեքսուալ կյանք ունենալը կարող է արդարացվել, եթե կինն ունենում է մշտական զուգընկեր, այլ ոչ թե անկանոն ու բազմազան սեքսուալ հարաբերություններ: Հետազոտական տվյալները թույլ են տալիս ասել, որ պահպանողական խավերի մեջ «աղջիկը պետք է կույս լինի» ներկայացված մոտեցումը կախված տարիքից կարող է երբեմն նաև փոխվել: Շատերն ընդունում են, որ եթե կնոջ ճակատագիրն այնպես չի դասավորվում, որ նա մինչև այդ տարիքը ամուսնանա, ապա կարելի է ընկալումով մոտենալ այն կանանց, որոնք կարող են մշտական զուգընկեր ունենալ: Այս դեպքերում դա խիստ չի դատապարտվում, և նման աղջիկները չեն պիտակավորվում որպես անբարոյական: Այստեղ կարևոր է համարվում, որ նման հարաբերությունը կառուցված լինի զգացմունքային և մարդկային փոխընբռման վրա, ու նաև խիստ կարևորվում է, որ աղջիկը ոչ թե անընդհատ զուգընկերներ փոխի, այլ ունենա կայուն զուգընկեր: Նշվածը վերաբերում է նաև ամուսնուն կորցրած կամ

բաժանված կանանց: *Ամուսնուն կորցրած կամ բաժանված կանանց պարագայում սակայն, կարևորվում է, որ այդ ամենը բացահայտ չարվի, քանի որ դա կարող է վիրավորել հատկապես տղա երեխաների արժանապատվությունը*: Այն, որ մայրը սեռական կապ ունի այլ տղամարդու հետ, կարող է դառնալ հասակակից տղաների քննարկման ու պիտակավորման առարկա: Այդ պատճառով շատ բաժանված կամ ամուսնուն կորցրած կանայք կամ գերադասում են հանուն երեխաների հրաժարվել այլ տղամարդ ունենալու մտքից, կամ դա անում են շատ գաղտնի ձևով:

Եթե աղջիկը «ճակատագրի բերումով» կորցրել է կուսությունը, ապա դա կարող է անբարոյականություն չհամարվել: Այս մոտեցման հիմնական մեկնաբանությունն այն է, որ եթե աղջիկը սիրահարվել է ու զգացմունքների ազդեցության տակ սեռական կապ է ունեցել, բայց հետո ինչ-ինչ հանգամանքների բերումով չի ամուսնացել, ապա նա կարող է չբնորոշվել որպես «անբարոյական»: Այստեղ *կարևոր է համարվում, սակայն, որ այդ աղջիկը հետագայում նոր սեռական զուգընկերներ ունեցած չլինի, և դեպքը լինի նրա կյանքի միակ սեռական ակտը*: Նման պարագայում, հնարավոր է համարվում նույնիսկ, որ նրա ապագա ընկերը հասկանա ու ների նրան և ամուսնանա հետը: Սրա հավանականությունը ավելի է մեծանում, երբ աղջիկը տարիքային առումով մոտ է լինում որպես «հասուն»՝ այսինքն երեսունին մոտ և ավել բնութագրվող տարիքային շերտին: Այս առումով՝ չնայած տղայի վարքագիծը կարող է չողջունվել նրա միջավայրի կողմից, սակայն նաև շատ խիստ քննադատության էլ չի ենթարկվի: Հաճախ նման դեպքերում, մարդիկ գերադասում են դա քննարկման առարկա չդարձնել և լռելյայն ընդունել կատարվածը:

Կնոջ համար բարոյական չի համարվում ամուսնացած տղամարդու հետ սեռական կապ ունենալը: Սրա հիմնական մեկնաբանությունն այն է, որ դա կարող է նպաստել այն բանին, որ տղամարդու և այդ կնոջ միջև առաջանան զգացմունքային կապեր ու կախվածություն, ինչը կարող է օտարել տղամարդուն իր ընտանիքից: Իդեպ, այստեղ դատապարտելի է համարվում ոչ միայն այն, որ ամուսնացած տղամարդու հետ տևական սեռական կապի հաստատումը կարող է հանգեցնել այդ տղամարդու ընտանիքի քայքայմանը և կնոջից բաժանվելուն, այլ նաև այն, որ տղամարդու մոտ տևական սեռական կապի հետևանքում զգացմունքային կապվածության առաջացումը կարող է նրան սառեցնել իր ընտանիքից, թուլացնել ընտանիքի ներսում կնոջ ու երեխաների հանդեպ հոգատարությունը, ջերմությունը և ընդհանուր առմամբ փչացնել տվյալ ընտանիքի մթնոլորտը: Հատկանշական է, որ այս նույն խնդիրը տղամարդու

սեքսուալ վարքագծի տեսանկյունից ունի բավականին տարբերվող մոտեցում, ինչին կանդրադառնանք վերլուծության համապատասխան բաժնում:

Անկանոն և բազմազան սեռական կյանք վարող աղջիկների վարքագիծը համարվում է ոչ բարոյական: Ըստ հետազոտության տվյալների, ամենից քննադատվող ու բարոյականացվող սեքսուալ վարքագիծը, որը գնահատվում է որպես ոչ բարոյական և պիտակավորվում խոսակցական լեզվում տարածված խիստ արտահայտություններով, վերաբերում է անկանոն ու հախուռն սեռական կյանք վարող կանանց ու աղջիկներին: Այս խմբի աղջիկների մեջ առանձնացվում են մի քանի հիմնական ենթախմբեր: ***Առաջին խմբի*** մեջ դասվում են այն աղջիկները, որոնք հաճախ են փոխում իրենց սեռական զուգընկերներին, արագ գայթակղվում են նոր տղաներով: *Ընդունելի չի համարվում հատկապես այն, որ ամեն անգամ նոր տղայի հետ ծանոթանալը կարող է ավարտվել սեքսուալ կապով*: Ըստ հետազոտության նյութերի՝ նման աղջիկները համարվում են շուտ սիրահարվող և սեքսուալ կապի տեսանկյունից հեշտ, մատչելի, և նրանց հետ տղաները լուրջ ու կայուն սիրային հարաբերությունների չեն ձգտում:

Երկրորդ խմբի մեջ դասվում են նրանք, ովքեր սեքսուալ նոր կապեր հաստատելու նպատակով հաճախում են ժամանցային այնպիսի հաստատություններ, որտեղ հեշտ կարելի է ծանոթություն հաստատել անծանոթ տղաների հետ: Այսինքն, *այստեղ քննադատելի է համարվում հատկապես այն, որ ոչ թե աղջիները պարզապես արագ սիրահարվում են, և այդ սիրահարվածությունն ավարտվում է սեռական կապով, այլ որ իրենք են հատուկ հետամուտ լինում նոր սեքսուալ կապերի հաստատմանը*:

Նկատենք, որ ինքնուրույն սեռական կյանք ունեցող կանանց ու աղջիկներին խիստ գնահատական տալիս են հիմնականում պահպանողական հայացքներ ունեցողները կամ նրանք, ովքեր հիմնականում հարում կամ համակրանքով են վերաբերում պահպանողական մոտեցումներին: Իսկ առավել ազատական հայացքներ ունեցողների կողմից այս խմբերին դասվող աղջիկների վարքագիծը, եթե նույնիսկ կարող է համարվել ոչ ընդունելի, չի պիտակավորվում որպես անբարոյական, քանի որ ազատ սեռական կյանք ունենալը համարվում է յուրաքանչյուրի անձնական գործը և չի բարոյականացվում:

Այս խմբին դասվող կանանցից հատկապես բացասական գնահատական է տրվում նրանց, ովքեր *ամուսնացած են և ունենում են արտամուսնական սեռական հարաբերություններ*: Նման տիպի սեռական կյանք վարող կանանց հիմնականում համարում են ոչ բարոյական տարբեր պատճառներով: Նախ՝ ազատ սեռական կյանք ունենալու համար: Երկրորդը, ինչն ավելի դատապարտելի է համարվում, սեփական ընտանիքի և զուգընկեր տղամարդու ընտանիքի հանդեպ անհարգալից վերաբերմունքն

է: Հատկապես անընդունելի է համարվում այլ ամուսնացած տղամարդու հետ կայուն ու տևական սեռական կապի հաստատումը, որը գնահատվում է որպես ուրիշի ընտանիքը քայքայելուն ուղղված արարք:

Առավել բացասական է վերաբերմունքը այն կանանց ու աղջիկների հանդեպ, ովքեր ոչ միայն ազատ ու անկանոն սեռական կյանք են վարում, այլև տարված են ալկոհոլի չարաշահմամբ և թմրամիջոցների օգտագործմամբ: Այս խմբի մեջ են հաճախ դասվում նաև լուսանցքային ենթամշակույթներին հարողները: Անընդունելի են համարվում հատկապես այնպիսի ենթամշակույթները, որոնց կենսակերպի համար բնութագրական են սեքսը, թմրամիջոցներն ու ալկոհոլը: Հետաքրքիր է, որ թմրամիջոցների ու ալկոհոլի չարաշահումը բացասական է գնահատվում նաև տղաների դեպքում, սակայն այն չի պիտակավորվում որպես անբարոյականություն:

Վճարովի սեռական ծառայություններ մատուցող կանայք և աղջիկները համարվում են անբարոյական: Ըստ գրանցված որակական հետազոտական տվյալների՝ «անբարոյական»-ի պիտակի տակ դասվում են հիմնականում վճարովի սեռական ծառայություններ մատուցող կանայք, որոնք կարող են շաբաթվա կամ նույնիսկ օրվա մեջ մի քանի տղամարդու հետ սեռական կապ ունենալ: Այս խմբի տարատեսակն են համարվում նաև այն կանայք ու աղջիկները, ովքեր չնայած դրամի դիմաց չեն իրականացնում սեռական ծառայություն, սակայն նյութապաշտական նկատառումներով ծանոթանում և սեռական կապ են ունենում վճարունակ տղամարդկանց հետ, նրանց հաշվին ժամանակ անցկացնում հիմնականում գիշերային և այլ ժամանցային հաստատություններում, ստանում տարբեր տեսակի նվերներ և այլ նյութական բնույթի փոխհատուցումներ:

Նման վարքագիծը բնութագրվում է որպես «անբարոյական» հասարակության համարյա բոլոր խավերի կողմից: *Բացառություն են կազմում հասարակությունում ոչ մեծ թիվ կազմող ֆեմինիստական հայացքներ ունեցողները*, ովքեր գնահատում են այն որպես ծառայության տեսակ, ելնելով այն համոզմունքից, որ յուրաքանչյուր կին ինքն է իր մարմնի տերը և նա ազատ է ինքնուրույն որոշել, թե ինչպես կտնօրինի իր մարմինը:

Կնոջ և ընդհանրապես մարդու սեռական կյանքը իր անձնական կյանքի իրավունքն է, և դրա հիման վրա նրան բարոյական կամ անբարոյական համարելը սխալ է: Սա բավական տարածված մոտեցում է 25-40 տարիքային միջակայքում գտնվող, կրթական բարձր ցենզ ունեցող, մասնագիտական որակավորում և միջինից բարձր վարձատրությամբ, առավելապես լուսավորչական հայացքների մարդկանց, ովքեր իրենց արժեքային ընկալումներով զգալիորեն տարբերվում են բնակչության պահպանողական

շերտերից: Այստեղ գլխավոր արժեքներ են դիտվում մարդու անձնական կյանքի ազատության, սեփական կյանքը ինքնուրույն տնօրինելու, ուրիշի անձնական տարածքի հանդեպ հարգալից վերաբերմունքը, մարդկային դրական հատկանիշներին առաջնային կարևորություն տալը: Այս խմբի ներկայացուցիչները բավական դիստանցավորված հարաբերություններ ունեն պահպանողական խմբերի հետ և նրանց հետ հիմնական հաղորդակցական միջավայրերը դա բարեկամների ու հարևանների հետ շփումն է: Նրանք հիմնականում գերադասում են հաղորդակցվել արժեքային ընկալումների առումով իրենց մոտ մարդկանց հետ: Մարդկանց հետ փոխհարաբերություններում խուսափում են քննարկման առարկա դարձնել մեկ այլ մարդու սեքսուալ կյանքն ու վարքագիծը և առավել ևս բարոյականացնել այն: Այս խմբի ներկայացուցիչների համար կարևոր են համարվում մարդկային այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ազնվությունը, արդարամտությունը, բարությունը, խաբեբա չլինելը, այլոց հանդեպ բացասական արարքներ թույլ չտալը, չվիրավորելը, մեկ ուրիշին հոգեկան և ֆիզիկական ցավ չպատճառելը, ուրիշի ազատությունը հարգելը, ուրիշի կյանքին չմիջամտելը, չգողանալը, մարդկանց հանդեպ բարիք գործելը*: Սա միակ խումբն է, որի ներկայացուցիչները չեն բարոյականացնում սեքսուալությունը և գտնում են, որ եթե մարդն ազնիվ է, բարի, խաբեբա չէ ու օժտված է մարդկային այլ դրական հատկանիշներով, բայց ազատ և ինքնուրույն սեռական կյանք է վարում, ապա նա բարոյական մարդ է:* Մնացած խմբերի մոտ բարոյականությունը ուղղակիորեն կապված է սեքսուալության հետ ու տարանջատված մարդկային դրական հատկանիշներից: *Այսինքն, պահպանողական հատվածի ընկալումների համաձայն մարդը կարող է լինել խաբեբա, ստախոս, վնասարար, բամբասկոտ, ուրիշների կյանքը փչացնող, բայց պահպանել սեռական կյանքի ընդունված նորմերն ու համարվել բարոյական մարդ*: Իսկ նա, ով հանրային առումով վնասարար չէ, օժտված է դրական մարդկային հատկանիշներով, բայց ունի ինքնուրույն սեռական կյանք, որը չի տեղավորվում պահպանողականների համար ընդունելի սեռական վարքագծի սահմաններում, կարող է պիտակավորվել որպես «անբարոյական»: ***Իդեպ, նշվածը չափազանց լուրջ խնդիր է մեր հասարակության բարոյական նկարագրի տեսանկյունից ընդհանրապես, քանի որ չափից դուրս կենտրոնացվածությունը կնոջ սեռականության տարուացման խնդիրների վրա հասարակության զգալի հատվածում ձևավորել է բարոյականության խեղաթյուրված պատկեր, ինչը լրջորեն վտանգում է հասարակության համակեցությունը, նպաստում ավտորիտար՝ մասնավորապես քրեական հասկացություններով բարոյականության խնդիրներին մոտեցող տղամարդկային խմբերի գերիշխանության ամրապնդմանը և ըստ նրանց պատկերացումների բարոյականության չափանիշների ձևավորմանն ու վերարտադրությանը***: Այդ

պատճառով, պահպանողականության անվան տակ հանդես եկող խմբերը Հայաստանում իրականում ոչ այնքան պահպանողական բարոյականության կրողներն են, որքան քրեական ենթամշակույթի հասկացություններով ու նորմերով ներծծված դրա տարատեսակը:

Նկատենք, որ հասարակության մեջ սեռականությունը և հատկապես կնոջ սեռականությունը չբարոյականացնող հատվածը, ում բարոյական ընկալումները կապված են առավելապես մարդու բարիք գործելու ու հանրայնորեն դրական այլ հատկանիշների հետ, բոլոր տեսանկյուններից առավել ինքնուրույն մարդիկ են: Նրանք ունեն գործունեության իրենց ոլորտները, ինքնահիրացվում են ոչ թե ուրիշների հաշվին, այլ իրենց ունակությունների ու կարողությունների ռեալիզացման միջոցով, ստեղծարար են և մասնակցում են հանրային բարիքի ձևավորմանը: ***Այս խմբի ներկայացուցիչները աչքի չեն ընկնում դեստրուկտիվ գործունեությամբ, անօրինությամբ, հասարակական կարգի խախտմամբ, կոռումպացված չեն: Սրանք հիմնականում նաև գտնվում են անհատական ու մասնագիտական շարունակական աճի մեջ, տնտեսապես գործուն են և մասնակցում են հանրային բարիքների ձևավորման գործընթացներին***:

Կնոջ մարմինը նրա սեփականություն է, այն տղամարդու սեփականությունը չէ, և կինն ազատ է իր մարմինը տնօրինել ինքնուրույն: Այս ընկալումը չնայած որոշակիորեն առկա է նաև նախորդ խմբի ներկայացուցիչների բարոյականության վերաբերյալ տրված մեկնաբանություններում, սակայն ունի խոսույթի մակարդակում հստակ սահմանած հետևողներ: Այն հիմնականում ձևակերպված է *ֆեմինիստական խոսույթի մակարդակում* և հանրայնացվում ու պաշտպանվում է ոչ միայն անհատական պրակտիկաների, այլև տարբեր բնույթի քաղաքացիական, արվեստային, գրական, հետազոտական, պրոտեստային ու այլ միջոցառումների միջոցով: Չի կարելի ասել, որ այն լայն հանրային տարածում ունի, սակայն ունի իր համակիրների շրջանակը, որին բնութագրական են համագործակցային հարաբերություններ: Այս խոսույթը բնորոշ է նաև կանանց իրավունքների և հատկապես կանանց հանդեպ բռնության դեմ պայքարող քաղաքացիական կազմակերպություններին: *Խուսույթի հիմնական իմաստը հայրիշխանական արմատավորված պրակտիկաների հաղթահարումն է ու տղամարդու իշխանական ենթակայությունից կնոջ ազատագրումը:* Հատկանշական է, որ այս խմբի ներկայացուցիչները խիստ ագրեսիվ վերաբերմունքի են արժանանում ծայրահեղ պահպանողական խմբավորումների կողմից, ենթարկվում հայհոյանքների, սպառնալիքների, ատելության խոսքի և ֆիզիկական բռնության: Վերջիններս իրենց գործողությունները կառուցում են ատելության, ագրեսիայի, սպառնալիքների, խտրականության քարոզի ու առանձին դեպքերում՝ նույնիսկ ֆիզիկական բռնության

գործադրման եղանակներով: ***Ուշագրավ է, որ «ազգային արժեքների պահպանության» անվան տակ հանդես եկող պահպանողական այդ խմբավորումներն իրենց վարքագծում առարկայացնում են հենց այն բռնությունն ու հարկադրանքը, որոնք իրոք ուղղված են կնոջը ենթակայական վիճակում պահպանելուն: Ավելին՝ այդ ամենը փորձ է արվում ձևակերպել որպես «ազգային» և «արժեք»: Այսինքն՝ արժևորվում է մի բան, որը մարդկային բարոյականության չափանիշներով հակասում է արժեք համարվելուն***:

1.2.Տղամարդու բարոյականության ու սեռականության խնդիրը

Ի տարբերություն կանանց՝ տղամարդը շատ ավելի հազվադեպ է թիրախավորվում և ձևակերպվում որպես «անբարոյական»: Տղամարդու սեքսուալ կյանքն ու վարքագիծը նույնպես, շատ հազվադեպ իրավիճակներում է, որ կարող է ենթարկվել քննադատության կամ պախարակության:

Կինը պիտի բարոյական լինի, կինը երևի ավելի շատ, բարձր սանդղակի վրա է դրած կնոջ բարոյականությունը, քանց թե տղամարդու: Բարոյական կնոջը երևի թե ավելի մեծ տեղ կուդան, քան թե տղամարդուն, պարտադիր չի էլի, որ տղամարդը բարոյական եղնի, բայց կինը եթե բարոյական է, ըդիգ լրիվ ուրիշ հասկացողություն է:

Կին, մարզային քաղաք, 25 տարեկան

Իսկ կանանց հետ ազատ սեռական կապեր ունենալու համար, ընդհանրապես, որևէ մեկի մտքով չի էլ անցնում տղամարդուն համարել անբարոյական: Ավելին՝ ***այն տղաները, ովքեր հնարավորինս շատ աղջիկների հետ են սեռական կապեր ունենում, հասակակիցների մեջ համարվում են առավել նախանձելի դիրքում գտնվողները:*** Ըստ գրանցված նյութերի՝ այս մոտեցումը տարածված է հատկապես պահպանողական խավերի մեջ, որտեղ հերթական սեքսուալ արկածը համարվում է ընկերների միջավայրում հպարտանալու թեմա: Այն հարցին, թե ինչու է այդ աստիճան արմատականորեն տարբերվում տղամարդկանց սեքսուալ վարքագծի հանդեպ վերաբերմունքը կանանց վարքագծի նկատմամբ ունեցած վերաբերմունքից, տրվել են մի քանի հիմնական բացատրություններ.

1. *Տղան մինչև ամուսնանալը ոչ միայն չպետք է կույս լինի, այլ հակառակը՝ խրախուսելի է սեռական փորձառություն ունենալը:*
2. *Տղամարդուն բնությունն է այդպես ստեղծել (կամ որոշ մեկնաբանություններով՝ աստված է այդպես ստեղծել), նա սեքսի կարիք ավելի շատ ունի, քան կինը*:
3. *Այդպես գալիս է հնուց, տղամարդը միշտ ազատ է եղել:*

4. *Տղամարդը դրսի մարդ է, կինը ներսի*:

Տղան մինչև ամուսնանալը ոչ միայն չպետք է կույս լինի, այլ հակառակը՝ խրախուսելի է սեռական փորձառություն ունենալը: Ըստ պահպանողական հայացքներ ունեցող շրջանակների՝ տղաների դեպքում կույս լինելը ոչ միայն խրախուսելի չէ, այլ հակառակը: Այդ պատճառով սեքսուալ փորձառություն չունեցող տղաներն աշխատում են թաքցնել դա շրջապատից: Տղայի համար սեռական փորձառության հարուստ կենսագրությունը համարվում է տղամարդկության կարևոր նշան: Հատկանշական է, որ աղջիկները նույնպես կիսում են այդ կարծիքը: Ավելին՝ եթե տղաները հասուն տարիքում դեռ կույս են լինում, ապա թաքցնում են դա՝ ընկերների ու ծանոթների շրջապատում ներկայացնելով իրենց որպես փորձառություն ունեցող մեկը: Շատ տղաներ իրենց փորձառությունը անցնում են վճարովի սեռական ծառայություն մատուցող կանանց հետ: Հետաքրքիր է, որ աղջկա մինչամուսնական կուսության պարտադիրությունը և տղայի հանդեպ այդ պահանջի բացակայությունը երբեմն բերում է այնպիսի արտառոց իրավիճակների ու պրակտիկաների ձևավորման, որոնք չնայած պահպանողական հայացքներ ունեցողների միջավայրում կարող են գնահատվել որպես «նորմալ» ու ընկալելի, սակայն առավել քաղաքակիրթ և լուսավորյալ հայացքներ ունեցողների աչքում նման վարքագիծը գնահատվում է անառողջ և խորքային առումով նաև անբարո: Ասվածը վերաբերում է ստորև բերված օրինակին և դրա նման բազմաթիվ դեպքերին: Խոսքն այն մասին է, երբ հասուն տղան ու աղջիկը ընկերություն են անում, սիրահարված են ու պատրաստվում են ամուսնանալ, սակայն տղան պարբերաբար սեքսուալ հարաբերություններ է ունենում վճարովի սեռական ծառայություն մատուցող կանանց հետ, բայց իր սիրեցյալի հետ սեռական կյանքով չի ապրում, քանի որ հավատարիմ մնալով բարոյական նորմերի պահանջներին՝ պահպանում են աղջկա կուսությունը ամուսնության առաջին գիշերվա համար: *Նման այլասերված դրսևորումները, որոնք տեղավորվում են այսօրվա պահպանողական խոսույթի տրամաբանության շրջագծում, իրականում որևէ կապ չունեն ազգային և պահպանողական արժեհամակարգի հետ*, որի անունից հանդես եկողները նման վարքագիծը հաճախ արդարացնում են՝ կարևորությունը տալով ոչ թե զույգերի լիարժեք էմոցիոնալ ու ֆիզիկական փոխհարաբերություններին, այլ աղճատված, բայց պահպանողական խավերի համար ընդունելի համարվող կարծրատիպային պրակտիկաներին:

Տղամարդուն բնությունն է այդպես ստեղծել, նա սեքսի կարիք ավելի շատ ունի, քան՝ կինը: Համաձայն հետազոտության ընթացքում պահպանողական արժեհամակարգ ներկայացնող կանանց և տղամարդկանց այս բացատրության՝ բնությունից տղամարդը

համարվում է սեռական կյանքի առումով բազմազանության ձգտող և ավելի ակտիվ, քան կինը: Ըստ այդմ՝ կինն ավելի շատ ձգտում է կայունության, իսկ տղամարդը՝ փոփոխությունների: Ըստ նրանց՝ տղամարդը նաև բնությունից այնպես է ստեղծված, որ ավելի հաճախ է ուզում սեքս անել, քան կինը: Նաև բնությունից տրված է համարվում այն, որ տղամարդը ձգտում է նոր կանանց հետ սեռական կապերի, իսկ կանայք ավելի միասեր են և ձգտում են ոչ այնքան ֆիզիկական, որքան զգացմունքային հարաբերություն և ջերմություն ձևավորելուն: Այդ պատճառով կանայք երբ տղամարդ են գտնում, ձգտում են բաց չթողնել, իսկ տղամարդիկ հակառակը՝ անընդհատ ձգտում են մի կնոջից մյուսին անցնել:

Այդպես գալիս է հնուց, տղամարդը միշտ ազատ է եղել: Ըստ այս մեկնաբանության՝ դա պայմանավորված է հնուց եկող սովորութային նորմերով.

Տարբերությունն էն է, որ տղամարդը միշտ ազատ է եղել: Ես չգիտեմ, էդ դարերից եկած բան է, որ տղամարդը պիտի ազատ լինի:

Կին, 36 տարեկան, մարզային քաղաք

Ըստ պահպանողական խոսույթի՝ տղաներին մշակույթն ավելի ազատ է դաստիարակել, իսկ աղջիկներին՝ ճնշված, որովհետև համարվել է, որ *աղջկա առաքելությունը մայր դառնալն է, ինչը պահանջում է սեռական կյանքի սահմանափակություն, առաքինություն, առողջություն և մարմնական մաքրություն*: Մարմնական մաքրություն ասելով նկատի է առնվում այն, որ կինն իր ամբողջ կյանքի ընթացքում միայն մեկ տղամարդ պետք է ունենա: Սակայն տղամարդու առջև ժամանակակից պահպանողական նորմերը նման սահմանափակում ոչ միայն չեն դնում, այլև խրախուսում են մինչամուսնական սեռական կապերը և հանդուրժողաբար մոտենում նույնիսկ արտամուսնականին: Հետաքրքիր է, որ այդ արդարացումները հանդիպում են ոչ միայն տղամարդկանց հետ իրականացված մեր հարցազրույցներում, այլև պահպանողական հայացքներ ունեցող կանանց: *Հարցազրույցներում հաճախ են հանդիպում կարծիքներ, որտեղ կանայք ոչ միայն տեսականորեն կամ վերացականորեն են արդարացնում տղամարդկանց ազատ սեռական կապերը, այլև հենց իրենց ամուսիններինը*: Այստեղ կարևոր է համարվում ոչ թե այն, որ տղամարդը ուրիշի հետ է սեռական կապի մեջ մտնում, այլ որ չի կապվում ուրիշ կնոջ հետ զգացմունքայնորեն ու չի հաստատում մարդկային տնական կապեր ու շփում այն կանանց հետ, ում հետ որ սեքսուալ հարաբերություն է ունենում: *Կանանց կողմից կարևորվում է հենց այն, որ իրենց տղամարդիկ կոմունիկատիվ առումով մնում է կապված իրենց հետ*: Այս առումով

պահպանողական համարվող կանանց ու տղամարդկանց համար ընդունելի է համարվում այն, որ տղամարդիկ այցելեն վճարովի սեռական ծառայություններ մատուցող կանանց, սակայն չկապվեն այնպիսի կանանց հետ, ովքեր հակված են տևական սեռական ու էմոցիոնալ կապ հաստատելու իրենց ամուսնու հետ, քանի որ այդ դեպքում վտանգ կարող է առաջանալ, որ կկորցնեն իրենց տղամարդկանց էմոցիոնալ առումով, ինչը նրանց կարծիքով կարող է դառնալ ընտանիքից սառելու ու կնոջից հեռանալու պատճառ:

Դե տղեն որ տուն գա խաբի, ասի թե ես սուրբ եմ, նման բան չկա: Ասում են ոնց ես ընդունում, ասում եմ բոլորդ էլ պետք ա ընդունեք, որ տղամարդու համար դա ըտենց ա: Կամ պետք ա ընդունեք, կամ ձեզ խաբեք: Դա ուրիշ հարց: Մարդ կա տենց ա գերադասում, ես գերադասում եմ ինձ չխաբել ու ընդունել էդ փաստը: Որ չընդունես, քեզ պետք ա խաբես, հիմարի նման ապրես: Ես հանգիստ եմ վերաբերում դրան: Ամուսինս էլ գիտի: Ինձ համար դա խնդիր չի: Ես չեմ ընդունում, որ երկարատև են կապվում ուրիշի հետ: Դա արդեն ուրիշ խնդիր ա: Դրանից կարող ա կապը ձեր մեջ կտրվի, էլ չնստեք չխոսաք, չքննարկեք ձեր հարցերը, մարդկայինը կորի: Դա կլինի իմ համար անբարոյական տղամարդու կողմից, որ գա քո մոտ, բայց մտքում ուրիշը լինի: Թե չէ մեկ անգամվա կապը լինում է ու անցնում, դրանցից վտանգ չկա, զգացմունք չեն ստեղծում, զուտ ֆիզիկական կապ ա:

Ամուսնացած կին, 37 տարեկան, Երևան

Տղամարդը դրսի մարդ է, կինը ներսի: Այս բացատրությունը լրացնում է նախորդ երկուսը և գործում է նախորդների հետ կապի մեջ: Համաձայն սրա՝ քանի որ տղամարդու գործունեության ոլորտը դրսում է, և նա տանը քիչ է լինում, ապա բնական է համարվում, որ նա ժամանակ առ ժամանակ գայթակղվի օտար կանանցով ու ունենա սեռական կապեր «դրսերում»: Դա, ըստ պահպանողական ընկալումների, չի խանգարում, որ նա վերադառնա ընտանիք: ***Հետաքրքիր է, որ այս նույն խոսույթի համաձայն՝ կինը չի դիտվում հավասարազոր սեռական պահանջմունք ունեցող էակ, ով նույնպես, ինչպես և իր ամուսինը, սեռական ցանկությամբ պայմանավորված կապեր հաստատի տարբեր տղամարդկանց հետ***:

Չնայած, որ կնոջ համեմատ տղամարդու համար սեռական կյանքի ազատությունը չի բարոյականացվում, սակայն ամեն դեպքում կան որոշ մեկնաբանություններ, որոնց համաձայն տղամարդու բարոյական կերպարի վրա նրա սեռական փորձառությունը կարող է անդրադառնալ: Ըստ գրանցված հետազոտական տվյալների՝ կարելի է առանձնացնել երկու նման բացատրություն:

Դրանցից առաջինի համաձայն՝ չնայած տղամարդու դեպքում հանդուրժելի է համարվում արտամուսնական կապեր ունենալը, սակայն դա պետք է այնպես արվի, որ ընտանիքի կայունությունը դրանից չտուժի: Այսինքն՝ համաձայն այս մեկնաբանության՝ խնդիրը ոչ թե տղամարդու արտամուսնական սեռական կյանքի անթույլատրելիության մեջ է, այլ որ այդ կապերը չազդեն ընտանիքի ձևական կայունության վրա: Այս համատեքստում բարոյական առումով դատապարտելի է համարվում նաև ցոփ ու շվայտ կյանք վարող ամուսնացած տղամարդը, ով հաճախում է գիշերային ակումբներ կամ ժամանցի այլ վայրեր, այն դեպքում, երբ այդ ժամանցի վրա արվող ծախսերը իրականացվում են ընտանիքի հաշվին: Այս կենսակերպը դատապարտելի է համարվում նաև այն պատճառով, որ նման դեպքերում նորից տուժում է ընտանիքի ձևական կայունությունը:

Հետազոտությունների ընթացքում գրանցվել են նաև հետաքրքիր տվյալներ վաղ երիտասարդության տարիքի տղաների մոտ տարածում գտած պատկերացումներից մեկի վերաբերյալ: Ըստ այդմ՝ տղայի ոչ ընդունելի բարոյական կերպարի մեկնաբանություններից մեկը կապված է կնոջ «անբարոյականության» մասին պատկերացումների հետ: Հատկապես 16-25 տարիքային միջակայքում գտնվող տղաների վրա չափազանց մեծ է այն խմբերի ազդեցությունը, ովքեր ապրում են թաղային տղայական հարաբերություններում բավական տարածում ունեցող քրեածին հասկացությունների ու ընկալումների համաձայն: Ըստ այդմ՝ ոչ բարոյական կարող են համարվել «փչացած» աղջիկների հետ «սխալ ձևով սեռական հարաբերություն» ունեցող տղաները: Խոսքն այստեղ վերաբերում է սեռական հարաբերության ժամանակ այդ աղջիկների հետ համբուրվելու անթույլատրելիությանը, քանի որ ենթադրվում է, որ «փչացած» աղջիկները զբաղվում են նաև օրալ սեքսով, իսկ նման աղջկան համբուրող տղան ինքը նույնպես պիտակավորվում է որպես «փչացած»: «*Փչացածի» պիտակավորում ստացած տղաները շրջապատի կողմից օտարվում են, ենթարկվում ֆիզիկական ճնշումների, անվանարկման, ծաղրի ու ստորացման այլ ձևերի*: Նման տղաների հետ նրանց շրջապատում հրաժարվում են ընկերություն անել, քանի որ նրանց հետ ընկերություն անողները նույնպես կարող են որակվել որպես «փչացած»: «Փչացածի» պիտակավորում ստանալը տղաների միջավայրում համարվում է շատ անցանկալի ու վտանգավոր մի բան, քանի որ վտանգվում են հայտնվելու ամենացածր կարգավիճակում, ովքեր հասակակիցների կողմից կարող են ենթարկվել հոգեբանական և ֆիզիկական մշտական ճնշումների ու բռնությունների:

Հատկանշական է, որ թաղային քրեականացված նորմերի համաձայն, որոնք հաճախ ընկալվում և մեկնաբանվում են որպես «ազգային» և «ավանդական», տղամարդու բարոյականության համար կարևոր առաջնային գործոն է համարվում խոսքը: Ըստ այդմ՝

լավ տղա է համարվում այն տղան, ով միշտ պահպանում է իր ասած խոսքի ճշմարտացիությունը: Թաղային ընկերական շրջապատում, եթե տղան նշում է որ իր խոսքը «հարյուր տոկոս» ճիշտ է, ու հետո պարզվի, որ նա խաբել է, կարող է կորցնել իր կարգավիճակը և հայտնվել լուսանցքային վիճակում, ինչը նույնքան վտանգավոր է, որքան «փչացածի» պիտակավորումը: Այս հասկացությունների համաձայն՝ խմբի ներսիններին չի կարելի խաբել, դա համարվում է խմբային բարոյականության դեմ գնալ: Խաբել կարելի է նրանց, ովքեր չեն ապրում թաղային քրեական հասկացություններով ու նորմերով և լավ տղայի համբավ չունեն:

Այսպիսով կարելի է ասել, որ բարոյականության մասին վերը նկարագրված պատումները կարելի է խմբավորել ըստ պահպանողական, հումանիստական և ֆեմինիստական խոսույթների: Առաջին հինգ պատումը, որոնք հիմնականում վերաբերում են կնոջ սեքսուալության բարոյականացմանը, կարելի է դասել պահպանողական, վեցերորդը՝ հումանիստական, և վերջինը՝ ֆեմինիստական խոսույթների մեջ: Ինչպես տեսնում ենք, պահպանողական խոսույթը կազմող պատումներն ավելի շատ են տրոհված, քան վերջին երկուսը: Պահպանողական խոսույթի բոլոր թեմաները պտտվում են կնոջ սեքսուալությունը բարոյականացնելու հարցադրման շուրջ: Ըստ այդմ՝ դրանցում *բարոյականը* սահմանվում է գլխավորապես որպես կանանց վարքագիծը գնահատող ու կարգավորող սոցիալական նորմերի հավաքածու: *Բարոյականի բովանդակային առանցքը կազմում է այն միտքը, որ կինն իր ողջ կյանքի ընթացքում պետք է ունենա միայն մեկ սեռական զուգընկեր, ով պետք է լինի նրա օրինականորեն ճանաչված ամուսինը: Ըստ այդմ՝ բարոյականության առանցքային չափանիշներն են համարվում աղջկա կուսությունը մինչև ամուսնություն պահպանելը և ամուսնական կյանքի ընթացքում ամուսնու հանդեպ հավատարմության պահպանումը: Ցանկացած այլ դեպք կասկածի տակ է դնում կնոջ բարոյական համարվելը*: Ըստ նույն տրամաբանության՝ սահմանվում է նաև անբարոյականը: Որպես անբարոյական են որակվում անկանոն և բազմազան սեռական կյանք վարող և վճարովի սեռական ծառայություններ մատուցող կանայք: Սակայն հետաքրքիր է, որ եթե նախկինում ըստ ավանդական պատկերացումների անբարոյական կարող էր համարվել ոչ ամուսնական ցանկացած սեռական հարաբերություն, ապա ներկայումս պահպանողական խոսույթը փոփոխությունների է ենթարկվում, և դրանում ի հայտ են եկել որոշ հանդուրժողական մոտեցումներ: Խոսքը վերաբերում է վերը նկարագրված երկրորդ և երրորդ պատումներին, համաձայն որոնց ներողամտորեն են վերաբերում սիրահարվածության հետևանքով կուսությունը կորցրած աղջկան և երեսուն տարին արդեն անց կանանց սեռական զուգընկեր ունանալու խնդրին: Երկու դեպքում էլ չի օգտագործվում «անբարոյական» պիտակավորումը, չնայած նման վարքագիծը ողջունելի չի համարվում:

Երկու դեպքում էլ նշվում է, որ նման աղջիկների հետ ամուսնացող տղաներին միջավայրը չի քննադատի բարձրաձայն, և կաշխատեն հիմնականում խուսափել աղջկա բարոյական կերպարը քննարկելու խնդրից:

Ներկայացված պահպանողական պատկերացումները թույլ են տալիս նաև ասել, որ *տղամարդու սեքսուալությունը ընկալվում և մեկնաբանվում է լայն առումով կնոջ ու տղամարդու անհավասարության խոսույթի ծիրում*: Բարոյական ընկալումները ուղղված են հենց այդ անհավասարության պահպանմանը և այն որպես մշակութային և «ազգային արժեք» դիտարկելուն: Այսինքն՝ ըստ ազգային-պահպանողական մեկնաբանության՝ կնոջ հանդեպ տղամարդու գերիշխանությունը, կնոջ սեքսուալությունը համարյա թե մինչև մերժելու աստիճան օբյեկտացումը, կնոջ սեքսուալությունը բացառապես տղամարդու սեքսուալության ռեալիզացմանը ծառայեցնելու և այն որպես բարոյական սահմանելու արմատավորված նորմերը գնահատվում են որպես «ազգային արժեք» և ենթակա չեն փոփոխության, քանի որ ցանկացած փոփոխության փորձ կարող է բարոյականացվել և մեկնաբանվել որպես «այլասերում»:

Ըստ հետազոտական տվյալների՝ վերջին տաս տարվա առանցքային փոփոխություններից է համարվում կնոջ վարքագիծը ըստ սեքսուալության բարոյականացնելու խոսույթներում հումանիստական խոսույթի կողմնակիցների թվի աճը: Այս փոփոխության պատճառը համարվում է այն, որ գնալով մեծանում է մարդակենտրոն ու հումանիստական գաղափարների համակիրների թիվը, ովքեր կարևորում են անհավասարությունների ու խտրականությունների վերացումը, մարդու ազատ ինքնաիրացման, անձնական կյանքի ազատության ու երջանիկ լինելու իրավունքի հանդեպ հարգանքը:

Ինչ վերաբերում է ֆեմինիստական խոսույթին, ապա այն նույնպես նորություն է մեր հասարակության համար: Չնայած ֆեմինիստական խոսույթը ինքնին միատարր չէ, սակայն հետազոտությունում անդրադարձ չի կատարվել դրա ներքին ճյուղավորումներին այն պատճառով, որ դրանք նշանակություն ունեն գլխավորապես խոսույթը կրողների միջավայրում, իսկ հասարակության լայն շերտերի համար այն առավելապես հայտնի է որպես մեկ միասնական խոսույթ:

1.3.«Կոմպրոմիսային» կամ բացառություն կազմող մեկնաբանություններ

Բացի վերը նկարագրված պատումներից՝ հետազոտությունը թույլ է տալիս խոսել նաև այն մասին, որ ներկայումս մեր հասարակությունը բարոյական ընկալումների տեսանկյունից գտնվում է փոխակերպումների ընթացքում: Գրանցված նյութերը ցույց են տալիս, որ հասարակության տարբեր շերտերում գործող մեկնաբանությունները չեն

բավարարում հասարակությունում առկա մոտեցումներում տեղի ունեցող փոփոխություններին, և ի հայտ են գալիս բարոյականության ու սեքսուալության հետ կապված նոր մեկնաբանություններ: Ըստ հետազոտության տվյալների՝ կարելի է առանձնացնել հետևյալ երկու մոտեցումները, որոնք նախկինում գերադասորեն խիստ դատապարտելի էին համարվում, սակայն ներկայումս դրանց հանդեպ որոշակի հանդուրժողական վերաբերմունք է նկատվում:

Համաձայն այդ մեկնաբանություններից մեկի՝ նշվում է, որ *եթե ամուսնական կյանքի ընթացքում ամուսինների միջև սեռական կյանքը խամրել և կորցրել է իր հետաքրքրությունը, ապա ոչ միայն տղամարդը, այլ նաև կինը նույնպես կարող է արտամուսնական սեռական կապեր ունենալ:* Նշենք, որ այս մեկնաբանությունը չնայած շատ տարածվածներից չէ, սակայն հետազոտության ընթացքում գրանցվել է թե կանանց և թե տղամարդկանց հետ ունեցած հարցազրույցների ընթացքում: Այս կարծիքը բնորոշ է հիմնականում երևանաբնակ, երեսունն անց, սեռական կյանքի փորձ ունեցող և հիմնականում բարձրագույն կրթություն, մասնագիտական զբաղվածություն և միջինից բարձր վաստակ ունեցող անձանց: Ըստ այդմ՝ չնայած կանանց արտամուսնական հարաբերությունները դրական չեն գնահատվում, սակայն նաև խիստ չեն դատապարտվում, չեն պիտակավորվում որպես անբարոյական: Նկատենք, սակայն, որ նույն արարքը պահպանողական խավերի կողմից որակվում է որպես «անբարոյական»:

Մեկ այլ մեկնաբանություն, որը խիստ չի դատապարտում կանանց արտամուսնական սեռական հարաբերությունները, գրանցվել է միգրանտական բնակավայրերում: Նշենք, որ սա նոր հանդիպող մեկնաբանություն է և տարօրինակ կերպով գրանցվել է հենց պահպանողական խոսույթը ներկայացնող անձանց հետ արված հարցազրույցների ժամանակ: Ըստ այս մեկնաբանության՝ *եթե ամուսինները ամիսներով հեռանում են իրենց կանանցից, մեկնում արտագնա աշխատանքի, այնտեղ իրենց համար ապրում ուրիշ կանանց հետ, ապա նրանց կանայք էլ կարող են երբեմն արտամուսնական սեռական կապեր ունենալ:* Այս կարծիքն արտահայտողները նույնպես չնայած չեն արդարացնում արտամուսնական կապեր ունեցող կանանց վարքագիծը, սակայն նաև խիստ չեն դատապարտում և ըմբռնումով են մոտենում: Հիմնական բացատրությունն այն է, որ ամուսինների երկար բացակայության ընթացքում երբեմն որոշ կանայք չեն դիմանում սեռական պահանջմունքին, ինչը չնայած ընդունելի չէ, բայց ընկալելի է: Հիմնականում նման կարծիք հայտնողները հենց միգրանտական բնակավայրերում ապրող կին բանասացներն են: Այստեղ դատապարտելի է համարվում միայն այն, որ արտամուսնական սեռական կապը չլինի ամուսնացած այլ տղամարդուն մշտական հարաբերության գայթակղելու միտումով: Այս դեպքում *դա գնահատվում է որպես ոչ բարոյական և շեշտադրվում է ոչ այնքան արտամուսնական սեռական*

հարաբերություն ունենալու խնդիրը, այլ ուրիշ կնոջ հանդեպ անազնիվ արարքն ու նրա ընտանիքը քայքայման ենթարկելու վտանգը: Այսինքն՝ սեռական կապ ունենալը, որպես մարդկային բնական պահանջմունք, դատապարտելի չի համարվում, սակայն դատապարտելի է համարվում ընտանիքի ինստիտուտի հանդեպ ոտնձգությունը:

Այսինքն, կանայք կան որ կսեն որ մենք չենք կրցել առանց ամուսին ապրել, մենք չենք կրցել ըդոր համար էդ քայլին ենք դիմել...բան չունեմ ըսելու, ես էդ պահանջներն էլ կհասկանամ, ես ինքս էլ ամուսնացած եմ, բայց ըդոր հետ մեկտեղ ըդոր միջոցներն էլ կան, ըդոր հետ մեկտեղ էլ ուրիշի տունը չքանդես, ուրիշի ընտանիքի դժբախտության վրա կյանքում պիտի չկառուցես քո երջանկությունդ:

Կին, Մարզային քաղաք, 28 տարեկան, ամուսնացած

Գլուխ 2. Բարոյականության ու սեքսուալության պրակտիկաները

Բարոյականության վերը նկարագրված ընկալումները, մեկնաբանությունները և խոսույթները արտացոլվում են մարդկանց վարքագծում՝ ձևավորելով համապատասխան պրակտիկաներ: Ըստ հետազոտական տվյալների՝ բարոյականության պրակտիկաները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: *Առաջին* խումբը բնորոշ է հիմնականում պահպանողական խավերին և կապված է կանացի սեքսուալության խնդրականացման հետ: *Երկրորդ* խումբ պրակտիկաները, որոնք հանդիպում են առավելապես հումանիստական արժեհամակարգ ունեցողներ անձանց միջավայրում, համարյա թե չեն առնչվում կանացի սեքսուալությունը խնդրականացնող ընդունված նորմերին և գլխավորապես կապված են մարդկային դրական հատկանիշներից բխող վարքագծային նորմերի հետ: Վերջին խմբում *հանդիպում են նաև այնպիսի պրակտիկաներ, որոնք ուղղակի կամ անուղղակի հակադրվում են պահպանողականության այնպիսի պրակտիկաների, որոնք վերաբերում են կանանց հանդեպ բռնությունների կիրառմանը՝ հատկապես ընտանեկան ու սեռական բռնություններին*:

2.1. Միջսեռային փոխհարաբերություններում աղջիկների հանդեպ վերահսկողական պրակտիկաները

Բնակչության պահպանողական խավերի մեջ ամենից տարածվածը կանանց հանդեպ իրականացվող վերահսկողական պրակտիկաներն են: Լայն առումով՝ կնոջ վարքագիծը բարոյականացնող բոլոր պրակտիկաները կապված են կնոջ սեքսուալության հանդեպ վերահսկողություն իրականացնելու հետ: Պարզապես դրանց մի մասը արտահայտվում է հենց սեքսուալ կյանքի հանդեպ ուղղակի, իսկ մի մասը՝ անուղղակի վերահսկողություն իրականացնող պրակտիկաներից:

Աղջկա սեռական կյանքի նկատմամբ ***ուղղակի վերահսկողությունը*** սկսվում է սեռահասունացման հենց առաջին տարիներից: Դա իրականացվում է սիրահարվելու, տղաների հետ հանդիպումներ ունենալու ու հաղորդակցվելու վրա ծնողների կողմից արգելքներ դնելու միջոցով: Այս պրակտիկաների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում ***խոսքային պրակտիկաները***, երբ մայրը և հայրը աղջկա հետ բացատրական աշխատանքներ են տանում ձևավորելու համար հատուկ մի մեխանիզմ, որի միջոցով արտաքին վարքագծային արգելքը վեր է ածվում ներքին վարքագծային արգելքի: Այսինքն՝ արտաքին բարոյական նորմերը ինտերնալիզացվում են վաղ դեռահասության շրջանում վերածվելով ինքնավերահսկողական վարքագծի...

Ասում ա մամա գիտես, որ մենք տղերքի հետ չենք կարում շփվենք էտի դուք եք մեղավոր, ասում ա դուք էնքան եք ասել, ես իրանց պատկերացնում եմ բոբո:

Կին, Երևան, 42 տարեկան, ամուսնացած

Քանի որ պահպանողական նորմերը պահանջում են, որի աղջիկները մինչև ամուսնանալը պահպանեն ոչ միայն իրենց կուսությունը, այլ նաև ընդհանարապես լիովին «մաքուր» լինեն, ինչը նշանակում է սիրահարված և հանդիպած չլինեն որևէ տղայի: Այս պրակտիկան բացառում է ոչ միայն մինչամուսնական սեռական հարաբերությունը, այլև ցանկացած ֆիզիկական բնույթի շփում տղաների հետ, ինչպես ասենք գրկվելը, շոյվելը, համբուրվելը և այլն: Ցանկացած նման վարքագծային արգելքի խախտում համարվում է բիծ աղջկա վրա և կարող է դառնալ խոսակցության առարկա տղաների միջավայրում.

Նայի, ես ընկեր չեմ ունեցել, բայց շատ ուզող տղերք եմ ունեցել: Հիմնականում էդ ամեն ինչը չեմ արել իմ ծնողի անունի համար, ընչի պտի մեկը ասի, որ իմ ծնողը էնքան թույլ մարդ է, որ իրա աղջիկը սենց նենց բաներ ա անում... ես բան չեմ արել, որ հանկարծ իմ պապայիս ու մամայիս անունին մե հատ բան չկպնի, իրանք էնքան շնորհքով են ապրել իրանց կյանքում, որ ոչ մի բիծ իմ ծնողիս անունին չպետք ա լինի....հմի որ իմ ապրածս թաղում հարցնես, իմ ընտանիքը յուրահատուկ ընտանիք է...:

Կին, մարզային փոքր քաղաք, 31 տարեկան, ամուսնացած

Եթե աղջկա հետ արդեն որևէ մեկը գրկվել կամ համբուրվել է, դա կարող է համարվել լուրջ պատճառ, որ նրա հետ տղաները ամուսնության նպատակով խուսափեն հանդիպելուց: Այս պրակտիկաների համաձայն՝ աղջկան թույլատրվում է հանդիպել տղայի հետ միայն այն ժամանակ, երբ տղան նախապես հանդիպում է աղջկա եղբայրներին կամ ընտանիքի տղամարդկանցից որևէ մեկին և հավաստիացնում, որ նա ցանկանում է հանդիպել աղջկա հետ ամուսնության նպատակով: Միայն նման հավաստիացումից հետո աղջիկը կարող է հոր կողմից թույլտվություն ստանալ մինչև ամուսնությունը մի քանի անգամ հանդիպել տղայի հետ: Ըստ ընդունված պրակտիկաների՝ տղաները չեն կարող խախտել թույլատրելիության սահմանները, քանի որ դա կգնահատվի որպես աղջկա և նրա ընտանիքի «պատվի» խախտում, ինչը կարող է հանգեցնել լուրջ հետևանքների: Խնդիրն այն է, որ տղաների համար տրված խոսքի խախտումը կարող է դառնալ պատժվելու պատճառ ոչ միայն աղջկա ընտանիքի կողմից, այլ տղամարդկանց միջավայրում ազդեցիկ դիրք ու իշխանություն ունեցող

թաղային հեղինակությունների, եթե աղջկա ընտանիքի տղամարդ անդամները համարվում են «հարգանքով» կամ «շրջապատ» ունեցող տղա: Նման դեպքերում խոսքը չպահպանած տղային կարող են հայտարարել որպես «փչացած», ինչը ամենից ցածր կարգավիճակն է տղաների թաղային ու բակային միջավայրերում: Նման կարգավիճակի արժանացած տղաները օտարվում են բոլոր տեսակի կապերից և կարող են պարբերաբար ենթարկվել ստորացումների ու ֆիզիկական ճնշումների:

Այսինքն՝ կարելի է ասել, որ աղջկա սեռական կյանքի հանդեպ ուղղակի վերահսկողությունը իրականացվում է նրա ծնողների, եղբայրների ու ողջ ընտանիքի անդամների կողմից, ինչի նպատակն է նրա՝ մինչև ամուսնությունը ոչ միայն կույս, այլև «մաքուր» մնալը: Այս առումով «մաքուր աղջիկ» արտահայտությունը նշանակում է մինչև ամուսնությունը որևէ տղայի հետ երբևիցե չհանդիպած և «չարատավորված» աղջիկը: Աղջկա հանդեպ այս վերահսկողությունը հատկապես ուժեղ է մինչև 27-28 տարեկանը, ինչը համարվում է ամուսնական տեսանկյունից ակտիվ տարիք: Այդ տարիքից հետո վերահսկողությունը որոշ առումով թուլանում է, ինչը բացատրվում է այն բանով, որ նվազում է ամուսնանալու հավանականությունը, և աղջիկը դուրս է գալիս այն տարիքից, երբ ամուսնության համար նրա լիովին «մաքուր» լինելը «շուկայական» արժեք է ներկայացնում: Չնայած դրան՝ պահպանողական միջավայրերում աղջիկները շարունակում են զգուշանալ և նրանք, ովքեր ամուսնանալու հույսը պահպանում են, շարունակում են պահպանել նաև իրենց կուսությունը:

Վերահսկողական պրակտիկաները տարածվում են ոչ միայն մինչամուսնական տարիքի աղջիկների, այլև ամուսնացած կանանց ու տղամարդկանց հանդեպ: Կանանց հանդեպ տղամարդիկ ավելի ազատ են և քիչ կախված կնոջ, ընտանիքի անդամների և միջավայրի հսկողությունից: Իհարկե, ըստ մեր գրանցած նյութերի՝ արտամուսնական կապերը տեսականորեն անընդունելի են համարում բոլորի համար՝ կին թե տղամարդ: Սակայն հետաքրքիր է, որ ***հատկապես պահպանողական և իրենց ավանդույթային համարող խավերի միջավայրում տղամարդիկ ավելի հաճախ ու անկաշկանդ են մտնում արտամուսնական սեքսուալ հարաբերությունների մեջ, քան քաղաքային բնակչության առավել ժամանակակից կենսակերպով և արդիական արժեքներով ապրող ամուսնական զույգերի մոտ***: Դրա բացատրությունն այն է, որ պահպանողական բարոյական կոդեքսը չի խնդրականացնում տղամարդու արտամուսնական սեռական կապերը, եթե տղամարդը կարողանում է ապահովել իր ընտանիքի նյութական բարեկեցությունն ու ֆորմալ առումով չի հեռանում ընտանիքից: Կարևոր դեր է կատարում նաև այն, որ ի տարբերություն պահպանողականի, որտեղ կարևորվում է անհավասարությունն ու ավտորիտարիզմը և կնոջ օբյեկտացման հաշվին տղամարդու սեքսուալության ռեալիզացումը, արդիական արժեհամակարգում հավասարությունը հիմնարար

գաղափար և արժեք է: Իսկ այդ հավասարության դիրքից թե տղամարդկանց ու թե կանանց ամուսնական անհավատարմությունը հավասարապես անընդունելի է համարվում: Այս խնդրին ավելի մանրամասն կանդրադառնանք վերլուծության հաջորդ բաժիններում:

Կնոջ սեռական կյանքի վերահսկման պրակտիկաները պահպանողական խավերում իրականացվում են ամուսնու, ընտանիքի, ազգակիցների, հարևանների և լայն առումով՝ համայնքի կողմից: Տղամարդու համեմատ կինը շատ ավելի խիստ վերահսկողության տակ է, քանի որ եթե տղամարդու արտամուսնական սեռական կյանքը չի անդրադառնում համայնքում կնոջ և ընտանիքի պատվի ու կարգավիճակի գնահատման վրա, ապա կնոջ արտամուսնական կապերի դեպքում նրա ամուսինը, տղաները և ընդհանրապես ընտանիքը միջավայրի կողմից կարող են ենթարկվել արհամարանքի, պատվարժանության ու կարգավիճակի անկման: Այդ պատճառով ամուսնացած կանայք պահպանողականությամբ աչքի ընկնող մարզային բնակավայրերում և Երևանի պահպանողական կենսակերպով աչքի ընկնող բնակչության միջավայրում գտնվում են շատ խիստ վերահսկողության տակ: Խիստ սահմանափակված են նրանց տարածական ու ժամանակային պրակտիկաները: Պահպանողական ընտանիքներում կինը հիմնականում պարտավոր է իր ժամանակը անցկացնել ընտանիքի ներսում, տան պատերի մեջ: Հաճախ նրան արգելված է աշխատանքի ընդունվել, քանի որ տանից դուրս գալը և մի քանի ժամ այլ միջավայրում անցկացնելը, որտեղ կարող է նաև օտար տղամարդկանց հետ հաղորդակցում տեղի ունենալ, համարվում է անթույլատրելի:

Երբ ես եկա ու կարի փոքրիկ արտադրամաս հիմնեցի այստեղ, փորձեցի երիտասարդ կանանց աշխատանքի ընդունել, բայց շատ զարմացա, որ հարևաններիս ջահել հարսներից ոչ ոք չուզեցավ գալ աշխատել: Հետո պարզվեց ամուսինները թույլ չեն տվել, քանի որ չեն ուզեցել, որ իրենց կանայք տանից դուրս գան, օտար մարդկանց հետ շփվեն, որ իրենց հետևից օտար տղամարդիկ չնայեն ու անցանկալի խոսակցություններ չառաջանան:

Կին, մարզային քաղաք, 52 տարեկան, ամուսնացած

Գործում են խիստ հաշվետվողական մեխանիզմներ, որոնց միջոցով կինը հաշվետվություն է ներկայացնում ամուսնուն և նրա ծնողներին իր բոլոր գործողությունների մասին: Հաճախ նույնիսկ ***առանց ամուսնու թույլտվության սեփական ծնողներին այցելությունն արգելված է***: Իսկ երբեմն էլ ոչ միայն անհրաժեշտ է ամուսնու թույլտվությունը, այլ պարտադիր է համարվում ամուսնու ուղեկցությունը: Կնոջը ամեն

տեղ ամուսնու ուղեկցությամբ գնալը կանայք համարում են ուշադրության նշան, սակայն ***իրականում դա ուղղված է տանից դուրս բոլոր իրավիճակներում կնոջն անընդհատ վերահսկողության տակ պահելու և այլ տղամարդկանց հետ նրա հնարավոր որևէ հաղորդակցումը բացառելուն***:

2.2. Կնոջ սեռականության վերահսկման անուղղակի պրակտիկաները

Կնոջ սեքսուալ վարքագիծը ուղղակիորեն վերահսկող պրակտիկաներից բացի կան նաև *ոչ ուղղակի կամ անուղղակի պրակտիկաներ*: Եթե *ուղղակի վերահսկողական պրակտիկաները* իրականացվում է տղաների հետ ֆիզիկական և զգացմունքային շփումները բացառելու նպատակով, ապա երկրորդներն ուղղված են աղջկա վարքագիծը բնակավայրում պարկեշտ ու առաքինի ներկայացնելուն: Դրանք հիմնականում վերաբերում են հագուստի, ժամանցի, ժամանակային, տարածական և այլ տիպի առօրյա պրակտիկաներին:

Հագուստը աղջիկների համար դիտարկվում է որպես նրա բարոյական նկարագիրը ներկայացնող բաղադրիչներից մեկը: Կան տարբեր տեսակի գնահատականներ: Ամենից անընդունելին, որի միջոցով կնոջը կարող են պիտակավորել նաև որպես անբարոյական, դա «վուլգար» համարվող հագուստն ու շպարն է: Վուլգար համարվում է այն հագուստը, որը ոչ միայն ընդգծում է կնոջ մարմնի սեռականացվող հատվածները, այլև դրա միջոցով ուղերձ է հղվում տղամարդկանց սեռական հարաբերություն ունենալու պատրաստակամության մասին: Ըստ տարածված կարծիքների՝ սովորաբար նման հագուստ կրում են կանայք, ովքեր իրականացնում են վճարովի սեքսուալ ծառայություններ, կամ այն աղջիկներն, ովքեր պատրաստ են ոչ բարի համբավ ունեցող ժամանցային հաստատություններում տղամարդու հաշվին հյուրասիրվելու և որոշակի նվերներ ստանալու դիմաց սեռական հարաբերության մեջ մտնելու: Սովորաբար նման աղջիկներին բնութագրում են որպես «անբարոյական», «մեկ գիշերվա կին», «թիթեռնիկ» և ավելի կոշտ, հաճախ հայհոյանքի նշանակություն ունեցող պիտակավորումներով: Որոշ խավերի մոտ վուլգար է համարվում նաև լուսանցքային կարգավիճակ ունեցող ենթամշակույթներին հարող աղջիկների հագուստը, որը կարող է և շատ ընդգծող չլինել, սակայն ըստ ընդունված գնահատականների՝ առանձնացնում է նրանց մյուսներից և խոսում է այն կրողի ազատ ու անկանոն սեռական կյանքի մասին: Սրանք, չնայած գրանցված նյութում էականորեն տարբերակվում են վճարովի կամ նյութական փոխհատուցման դիմաց սեռական ծառայություններ մատուցող կանանցից, սակայն նույնպես բարոյականացվում են:

Բացի «վուլգար» գնահատվող հագուստի ձևերը՝ կան նաև հագուստի ձևեր, որոնք չնայած չեն համարվում բարոյականացման ցուցիչ, սակայն կարող են համարվել աղջկա համար ոչ ընդունելի կամ ոչ պարկեշտ: Հետաքրքիր է, որ դա կապված չէ այն բանի հետ, որ հագուստը ընդհանրապես թաքցնի աղջկա կամ կնոջ մարմնի սեռական ընդգծվածությունը: Կան հագուստի ձևեր, ինչպես օրինակ, սեղմ կամ պատռված ջինսեր, վերնազգեստի տեսակներ, որոնք ընդգծում են մարմինը, բայց համարվում են ընդունելի: Սակայն կան նաև այնպիսիններ, որոնք համընդհանուր պատկերացումների համաձայն ընդունելի չեն: Դա կարող է լինել ընդունվածից մի փոքր ավելի կարճ շրջազգեստը, ուսերի և կրծքի հատվածում թույլատրելիից մի փոքր ավելի բաց վերնազգեստը: Այստեղ կարևորն այն է, որ աղջիկը կամ կինը հագնվի հագուստի ընդունված ու թույլատրելի նորմի շրջանակներում, որը թույլ չի տա միջավայրում թիրախավորել նրան և դարձնել քննարկման առարկա:

Կնոջ սեռականության վերահսկման անուղղակի տարածված ձևերից է նաև ժամանցի կազմակերպման պրակտիկաների հանդեպ արգելանքներն ու բարոյական պիտակավորումները: Կան ժամանցի ձևեր ու վայրեր, որոնք պահպանողական կենսակերպով ապրող հասարակական միջավայրերում համարվում են ոչ ընդունելի աղջիկների համար: Դրանք առաջին հերթին գիշերային ակումբներ են: Խոսքը վերաբերում է ոչ միայն մարզային բնակավայրերին, այլև Երևանին: Ընդհանրապես, գիշերային ակումբների հանդեպ բացասական վերաբերմունքը համատարած է: Ըստ տարածված կարծիքի՝ նման վայրեր հաճախում են հիմնականում ոչ բարոյական սեռական վարքագիծ ունեցող կանայք:

Պահպանողական խավերում անընդունելի են համարվում նաև աղջիկների կողմից այնպիսի ժամանցային վայրեր հաճախելը, որտեղ կարելի է տղաների հետ ազատ շփվել, օգտագործել ոգելից խմիչքներ, ծխել, հաստատել անձնական ծանոթություններ: Նման տեղեր հաճախելը հատկապես ողջունելի չի համարվում երեկոյան ու գիշերային ժամերին: Այդպիսի վայրեր են համարվում փաբերը, բարերը, երիտասարդական ակումբները (club) և պարահրապարակները:

Ըստ գրանցված նյութերի՝ *երիտասարդ տարիքի տղաների միջավայրում ժամանցային վայրերը տեսակավորված են*: Դրանք հստակ բարոյականացված են: Կան ժամանցային վայրեր, որոնք ունեն բարի համբավ, և այնտեղ աղջիկների հաճախելը համարվում է ընդունելի: Սակայն կան նաև այնպիսիններ, որտեղ հաճախելը աղջիկների համար խիստ սահմանափակված է: Նման հստակ սահմանազատում կա հատկապես մարզային բնակավայրերում: Որոշ բնակավայրերում նույնիսկ սրճարան հաճախելը աղջիկների համար թույլատրելի չէ: Միայն վերջին տարիներին մարզային միջին քաղաքներում քիչ թե շատ հանդուրժողականություն է ցուցաբերվում

սրճարաններ և ռեստորաններ կանանց հաճախելուն: Սակայն այս պրակտիկան խիստ կանոնակարգված է: Աղջիկները և կանայք նման տեղեր կարող են հաճախել հիմնականում ընտանիքի անդամների ուղեկցությամբ: Շատ հազվադեպ թույլատրվում է ցերեկային ժամերին հաճախել սրճարան ընկերուհիների խմբով:

Ինչ վերաբերում է Երևանին, ապա այստեղ պրակտիկաները շատ բազմազան են: Ժամանցի որոշակի վայրեր կան, որոնք բարոյականացված են համարյա ողջ հասարակության մեջ: Դրանք գլխավորապես գիշերային ակումբներ են, որտեղ ըստ համատարած կարծիքի, հաճախում են բարոյապես ոչ դրական վարկանիշ ունեցող կանայք:

Մնացած ժամանցային հաստատությունների վերաբերյալ պրակտիկաները տարբերվում են ըստ մարդկանց արժեհամակարգի: Պահպանողական խավերի համար անընդունելի է համարվում աղջիկների հաճախումը այնպիսի ժամանցային տեղեր, որտեղ ընդունված է ժամանակ անցկացնել տղա-աղջիկ խառը խմբերով, օգտագործել ալկոհոլային խմիչքներ, պարել, զվարճանալ և այլն: Նման ժամանցային վայրեր են համարվում փաբերը, տարբեր տեսակի երիտասարդական ժամանցային ակումբները, գիշերային բարերը: Նման ժամանցային հաստատություններ հաճախող աղջիկների նկատմամբ վերաբերմունքը այնպիսին չէ, ինչպես գիշերային ակումբներ հաճախողների հանդեպ, նրանց չեն պիտակավորում որպես «անբարոյական», սակայն ամեն դեպքում պահպանողական խավերի մեջ այն քննադատվում է և դառնում բամբասանքի առարկա: Նման ժամանցային հաստատություններ հաճախող աղջիկները դիտարկվում են նաև ամուսնության համար ոչ ցանկալի: Պահպանողական խավերի ընտանիքներում հայրերի ու եղբայրների կողմից խստորեն վերահսկվում է քույրերի ժամանցային վայրեր հաճախելու հարցը: Թույլատրելի է միայն ընկերուհիների հետ սրճարաններ այցելությունը և այն էլ՝ ոչ շատ ուշ ժամերի: Թույլատրելի տարբերակներից է նաև աշխատանքային կոլեկտիվների ու բարեկամների հանդիսություններին հաճախելը: Մնացած բոլոր դեպքերում աղջիկները ենթարկվում են սահմանափակումների:

Ժամանցային վայրեր այցելելու տեսանկյունից առավել ազատ են ոչ պահպանողական խավերի ընտանիքների աղջիկները: Երիտասարդական ժամանցային վայրեր առանց սահմանափակումների են հաճախում նաև տարիքային առումով որոշակի հասունացման փուլում գտնվող աղջիկները: Աղջիկները ինքնուրույնանում են և ընտանիքի վերահսկողությունից մի փոքր ավելի ազատություն են ձեռք բերում հիմնականում 26-27 տարեկանից հետո: Ըստ գրացված հետազոտական նյութերի՝ դրանք հիմնականում բարձրագույն կրթություն ստացած, մասնագիտական միջինից բարձր որակավորում ունեցող, տնտեսական ինքնուրույնությամբ աչքի ընկնող, ոչ պահպանողական, հիմնականում «ժամանակակից» կամ «ազատամիտ» համարվող

աղջիկներն են: Այսինքն, կարելի է ասել, խոսքը վերաբերում է հիմնականում կայացած անհատականություններին: Անհատականության գործոնը աղջիկների ժամանցի ազատ կազմակերպման հարցում չափազանց կարևոր նշանակություն ունի և միջավայրից ազատությունն ու ինքնուրույնությունը գալիս է որպես անհատ կայացմանը զուգահեռ:

Առօրյա պրակտիկաների տեսանկյունից բարոյականացվող մյուս հիմնական ոլորտը համարվում է ժամանակի ու տարածական պրակտիկաների կազմակերպումը: Պահպանողական միջավայրերում տղամարդկանց կողմից խիստ վերահսկվում են աղջկա ու կնոջ տարածական պրակտիկաները: Ըստ ընդունված բարոյական նորմերի՝ աղջիկներն ու կանայք ունեն հոր, եղբոր կամ ամուսնու կողմից սահմանված և թույլատրելի շարժման երթուղիներ: Կանայք հիմնականում անցկացնում են տանը կամ հարևանների միջավայրում: Թույլատրելի երթուղիներից է նաև երեխաներին դպրոց կամ այլ ուսումնակրթական հաստատություններ ուղեկցելը, խանութ գնալը: Նույնիսկ ծնողների տուն այցելությունը պետք է իրականցվի տղամարդու թույլտվությամբ: Կանանց շատ հազվադեպ է թույլատրվում միայնակ շարժվել: Եթե թույլատրվում է այցելել ծնողների կամ բարեկամների տուն, ապա ցանկալի տարբերակը երեխաների հետ այցելությունն է, ինչը նույնպես դիտարկվում է որպես վերահսկողության ձև: Մարզային փոքր քաղաքներում ու գյուղերում խիստ սահմանափակված են նաև մինչամուսնական տարիքի աղջիկների շարժերը թաղամասում կամ գյուղի մեջ: Չի թույլատրվում դուրս գալ քաղաքի փողոցներում կամ գյուղի մեջ միայնակ զբոսանքի, քանի որ դա դիտարկվում է որպես տղաների ուշադրությունը գրավելու ու գայթակղելու վարքագիծ: ***Աղջիկների տարածական պրակտիկաները և վարքագիծը խստորեն վերահսկվում է եղբայրների, հայրերի ու մայրերի կողմից***:

Տարածական պրակտիկաների վերահսկողությունն ուղեկցվում է նաև ժամանակային պրակտիկաների սահմանափակումներով: Նախ, տարածված պրակտիկաներից մեկը ընտանիքի տղամարդկանց կողմից աղջիկների և կանանց ժամանակացույցին հետևելն է: Դա իրականացվում է հստակ ամրագրված ժամային գրաֆիկին համապատասխան, որը կարգավորվում է դասի, աշխատանքի կամ այլ զբաղմունքների ամրագրված ժամերին հետևելով: Աղջիկներն ու կանայք պարտավոր են նշված ժամին վերադառնալ տուն: Թույլատրելի տատանումը կես ժամն է: Ավելի ուշացումը կասկածների տեղիք է տալիս, ինչի հետևանքով աղջիկը կամ կինը կարող է ենթարկվել մանրամասն հարցաքննման: Իր ժամային գրաֆիկին հետևող տղամարդուն աղջիկը կամ կինը պարտավոր է փաստարկված բացատրություն տալ ընդունված ժամից շեղման համար: Կարևոր պրակտիկա է համարվում նաև «մութ ժամերի» սահմանափակումը: Պահպանողական կենսակերպով ապրող հասարակական

միջավայրերում համատարած պրակտիկա է երեկոյան ժամերին աղջիկներին ու կանանց առանց տղամարդու փողոց դուրս չգալու սահմանափակումը[10]:

Վերահսկողական անուղղակի պրակտիկաներից է նաև ***խոսքի փոխանակության ու հաղորդակցման վերահսկումը***: Աղջկան չի թույլատրվում տղաների հետ երկար զրույցներ ունենալը: Խիստ անցանկալի է համարվում փողոցով տղայի հետ զրուցելով քայլելը կամ հանրային տարածքներում տղա-աղջիկ երկարատև հաղորդակցումը: Մեկ-երկու խոսքը դատապարտելի չի համարվում, սակայն զրույցի երկարելը արդեն անհանգստության տեղիք է տալիս: Աղջկան նման արարքի համար տանը ամպայման նկատողություն կարվի եղբոր կամ ծնողների կողմից: Անհրաժեշտության դեպքում կիրականացվի նաև բացատրական աշխատանք: Ըստ գրանցված նյութերի՝ ***առավել անհնազանդ աղջիկները կարող են ենթարկվել նաև ֆիզիկական բռնության ու ծեծի՝ հիմանականում եղբայրների կողմից, ինչը հաճախ նաև խրախուսվում է հայրերի կողմից***: Դա դիտարկվում է որպես «քրոջն անտեր չթողնել», «տիրություն անել» և այլն:

Ամփոփելով վերլուծության այս հատվածը՝ կարելի է ասել, որ չնայած վերը նկարագրված առօրյա պրակտիկաների սահմանափակումները առաջին հայացքից ուղղակիորեն չեն առնչվում աղջիկների ու կանանց սեքսուալության վերահսկողությանը, սակայն իրականում դրանց բոլորի հիմքում հենց այդ խնդիրն է դրված: Կանանց սեքսուալության վերահսկողության ուղղակի ու անուղղակի պրակտիկաները տարածված են գլխավորապես պահպանողական խավերի մեջ, որտեղ կինը դիտվում է որպես տղամարդու իշխանության իրականացման օբյեկտ: Տղամարդու իշխանությունն ու կնոջ օբյեկտացումը սոցիալ-մշակութային այս միջավայրերում սահմանված են սովորութային նորմերի միջոցով, որոնց պահպանողական խավերի կողմից փորձ է արվում տալ որպես մշակութային և ազգային ինքնության պահպանման համար դեր խաղացող արժեքային նշանակություն: Պատահական չէ, որ հենց պահպանողական տղամարդիկ են հանդես գալիս նման երևույթների արժևորմամբ ու պաշտպանությամբ, ովքեր իրենց առօրյա պրակտիկաներում կարևորում են կնոջ հանդեպ իշխանության բանեցման և նրա սեռականությունը օբյեկտացնող սոցիալական նորմերը:

Հետազոտական նյութերը թույլ են տալիս ասել, որ հատկապես քաղաքային բնակավայրերում բավականին տարածված են նաև ոչ պահպանողական մոտեցումները: Բնակչության ոչ պահպանողական միջավայրերում հակառակը՝ կնոջ հանդեպ իշխանության բանեցումն ու նրա օբյեկտացումը դիտարկվում է որպես անմարդկային և

[10] Կանանց վարքագծի հետ կապված առօրյա պրակտիկաների ավելի մանրամասն վերլուծությունը կարելի տեսնել Ա.Թադևոսյանի մեկ այլ աշխատանքում՝ տես Թադևոսյան Ա., Գենդերային անհավասարություն և առօրյա պրակտիկաներ. Հիմնախնդիրներ և մարտահրավերներ, Երևան, 2015:

կնոջ հանդեպ անհարգալից, խտրական մոտեցում: Այս խոսույթներում և պրակտիկաներում կինը դիտվում է որպես ոչ թե օբյեկտ, այլ հավասարազոր սուբյեկտ, սեփական անհատականությունը ունեցող մարդ: Իսկ վերը նկարագրած վերահսկողական պրակտիկաները այս խավերի մեջ հիմնականում չեն գործում: Կին - տղամարդ փոխհարաբերությունները այս միջավայրերում կառուցվում են անհատականության և հավասարության սկզբունքների հիման վրա, փոխադարձ հարգանքի ու վստահության մթնոլորտում:

2.3. Կանացի և տղամարդկային սեռականության իրացման պրակտիկաները և դրանց բարոյականացման առանձնահատկությունները

2.3.1. Կանանց սեռական կյանքի պրակտիկաները

Պահպանողական կանանց սեռական կյանքի պրակտիկաներում որպես կանացի ամուսնական պարտականություն մեծ տեղ է տրվում անկողնում տղամարդու ցանկությունների բավարարմանը ծառայելը: Այս առումով՝ կանայք, ովքեր ֆիզիկապես գրավիչ են համարում իրենց ամուսիններին, կարողանում են համատեղել պարտականությունը սիրո և ամուսնական կյանքից ստացվող սեռական վայելքի հետ: Սակայն այն կանայք, ովքեր դրան մոտենում են հիմնականում որպես պարտականության, հենց որպես պարտականություն էլ այն անում են: Գրանցված նյութերում հանդիպում են պատմություններ, որտեղ կանայք իրենց սեռական փորձառությունը բնութագրում են որպես ամուսնու հետ սեռական հարաբերությունների գորշ ընթացք, որտեղ իրենց դերակատարությունը տեսնում են ամուսնու սեռական ցանկությունը բավարարելուն իրենց մարմինը ծառայացնելու մեջ: Ըստ գրանցված նյութերի՝ կանանց սեռական կյանքի նման պրակտիկաները նկարագրական են հատկապես պահպանողական կամ հայացքներով պահպանողականությանը համակիր խմբերում: ***Կնոջ սեքսուալ կյանքի, սեքսուալ հաճույքի ստացման խնդիրը նման հարաբերություններում քննարկվող հարցերից չէ***: Ավելին՝ նման հարցադրումների փորձերը կարող են ենթարկվել խիստ քննադատության տղամարդու կողմից: Ընդհանրապես, պահպանողական խմբերում կնոջ սեքսուալ կյանքին վերաբերող հարցերի քննարկումը բարոյական չի համարվում և հիմնականում լռության է մատնվում:

Կանանց մեջ ոչ շատ տարածված, սակայն նաև գործող սեքսուալ պրակտիկաներից է *արտամուսնական կապերի հաստատումը*: Ըստ գրացված նյութերի՝ դա հատկապես ոչ հազվադեպ հանդիպող երևույթ է միգրանտական բնակավայրերում, որտեղ տղամարդկանց զգալի մասը ամիսներ շարունակ մեկնում է արտագնա

աշխատանքի: Ըստ կին բանասացների վկայության՝ միայնակ մնացած կանայք միշտ չէ, որ ամիսներ շարունակ կարողանում են դիմանալ մենակությանը և գաղտնի կերպով արտամուսնական կապեր են ունենում: Փոքր և միջին բնակավայրերում, որտեղ մարդիկ հաճախ միմյանց ճանաչում են, կանայք հաճախ ձգտում են արտամուսնական հարաբերություններ ունենալ օտար տղամարդկանց հետ, ովքեր չեն բնակվում տվյալ համայնքում, իսկ հնարավորության դեպքում նույնիսկ օտարազգի, քանի որ համարվում է որ այդ միջոցով գաղտնիության հավանականությունը ավելի մեծ է: Սակայն քիչ չեն դեպքերը, երբ արտամուսնական կապեր են հաստատվում նաև տվյալ բնակավայրի ներսում ամուսնացած տղամարդկանց հետ, քանի որ համարվում է, որ ամուսնացած տղամարդիկ նույնպես կձգտեն գաղտնապահության և չեն հանրայնացնի իրենց կապը համայնքում բնակվող մեկ այլ կնոջ հետ: Նման կապերի հաստատմանը, ըստ բանասացների վկայության, բավական նպաստում են սոցիալական տարբեր ցանցերի անդամությունը: Հետազոտության ընթացքում գրանցվել են նաև նյութեր, երբ որևէ կնոջ համայնքում կասկածելիս, այլ կանայք կեղծ օգտագտիրոջ հաշիվ են բացել և գրագրություն սկսելով նրա հետ, ստացել նրա համաձայնությունը արտամուսնական կապի մեջ մտնելու մասին և այդ կերպ բացահայտել նրան: Հատկանշական է, որ արտամուսնական գաղտնի կապերի տարածվածությունը և դրա մասին խոսակցությունները բավական աշխույժ քննարկվող թեմաներից են պահպանողական միջավայրերում: Դրանց մոտեցումը արտաքուստ խիստ դատապարտող է, սակայն հատկապես երիտասարդ ու միջին տարիքի կանանց միջավայրում հնչում են նաև դրա նկատմամբ ըմբռնողական կարծիքներ, որտեղ չնայած չեն արդարացնում նման արարքը, սակայն նաև խիստ չեն դատապարտում, քանի որ հասկանում են ամիսներ շարունակ առանց ամուսին մնացած կանանց հոգեվիճակն ու բարդությունները.

Շատ շատ են, թե հարսների մեջ, ամուսնացած կանանց: Պատճառը, որ կուսումնասիրես ինձի կթվա, որ ազատությունն է իրանց: Որ ամուսինները ստեղ չեն, իրանք էլ երիտասարդ աղջիկներ են, ամեն մարդու ուղեղ մե ձևիմ կաշխատի: Ջահել ընտանիքներ են, ինձանից ավելի փոքր աղջիկներ ու կսին աղջիկները խելք չունին ըդիկ շատ ճիշտ խոսք է: Ես ամուսնուս կեղծ բացած սայտով գրել եմ մի թեթև, ու էդ աղջիկը համաձայնել է հանդիպման, հիմի նստել ենք մարդ ու կնիկ, կսե ինչ կսարքես գլխիս, կսեմ, գուզեմ տեսնեմ ինչքան թեթևամիտ են: Երբեմն տեղեր գուկա, որ չես մեղադրե, հմի չեմ կրա սեմ, կարող է իրանց էս տարիքում սիրո պակասն է, որ իրանք չեն լրացնե, իրանց ամուսինները դուրսն են 7-8 ամիս:

Կին, մարզային բնակավայր, 35 տարեկան

Այս պատմությունները տաբեր կերպ են ավարտվում: Կան, որ ամուսինները անհավատարմության մասին իմանալով, բաժանվում են: Լինում են դեպքեր, որ որոշ տղամարդիկ և համայնքը նույնպես խուսափում է այս հարցի քննարկումից և լռելյայն իրավիճակը հարթվում է: Հաճախ նաև դրանք հանգեցնում են ընտանեկան պարբերաբար կրկնվող վեճերի, որոնք հաճախ ավարտվում են ծեծով ու բռնության տարբեր ձևերով: Նկատենք նաև, որ *աշխատանքային միգրացիայի տարածվածությամբ բնորոշվող միջավայրերում բավական խիստ է նաև սեռական ակտիվ տարիքի կանանց հանդեպ վերահսկողությունը: Այն իրականացվում է հատկապես ամուսնու ծնողների, կնոջ երեխաների, տղա երեխաների կողմից:*

Ըստ գրանցված նյութերի՝ կանանց արտամուսնական սեռական կյանքի պրակտիկաներից մեկն էլ հանդիպում է ամուսնական կյանքի միօրինակությունից ձանձրացած և նոր սեռական փորձառության ձգտող կանանց մեջ: Նման դեպքեր առավել տարածված են հատկապես Երևանում: Այս պրակտիկան նույնպես ունի տարատեսակներ: Հանդիպում են դեպքեր, երբ կանայք մեկ զուգընկեր են պահում, հանդիպում են նաև զուգընկերներին հաճախ փոխող կանայք: Սովորաբար այս պրակտիկաները նույնպես գաղտնի են պահում: Բացահայտման դեպքում հիմնականում դրանք ավարտվում են բաժանմամբ: Սակայն լինում են դեպքեր նաև, երբ ամուսինները անտեսում են կնոջ անհավատարմության դեպքերը ու շարունակում ապրել միասին:

Վերջին տասնամյակում հանդիպող կանանց սեռական կյանքի պրակտիկաներից է նաև ազատ և ինքնուրույն սեռական կյանքով ապրելը: Այս պրակտիկան տարածված է տնտեսապես ինքնուրույն, կրթական ու մասնագիտական բարձր ցենզ ունեցող, կայացած, ինքնահաստատված, սովորաբար 25 տարեկանն անց կանանց միջավայրում: Հաճախ նրանք ունենում են կայուն զուգընկեր, ում հետ ապրում են կանոնավոր սեռական կյանքով: Նման կանանց պրակտիկաներում ընդունված ձևերից է նաև քաղաքացիական ամուսնության ձևաչափը, որը հաճախ ավարտվում է ամուսնությամբ: Նրանց զուգընկերները նույնպես ունեն նույն արժեքային ընկալումները, որոնց հիմքում ընկած է կնոջ անհատականության, նրա մարդկային դրական հատկանիշների գնահատումը, այլ ոչ սեռականության տեսանկյունից օբյեկտացումը: Այսինքն՝ կնոջ հետ փոխհարաբերությունը նման տղամարդկանց համար սուբյեկտ-սուբյեկտ դաշտում է, որտեղ կինը դիտվում է որպես ոչ թե տղամարդու սեռական ցանկությունների բավարարման օբյեկտ, այլ սեփական սեքսուալությունն ունեցող և այն իրացնելու հավասար իրավունք ունեցող զուգընկեր:

Այս պրակտիկան բնորոշ չէ պահպանողական միջավայրերին: Ազատ և ինքնուրույն սեռական կյանքով ապրող կանայք անձնական կյանքի ու տարածքի տեսանկյունից որոշակիորեն դիստանցավորված են իրենց ազգարյունակցական և

հարևանական խմբերից: Նրանք ավելի ինտեգրված են իրենց մասնագիտական կամ հանրային բովանդակություն ունեցող, քան մեխանիկական համերաշխության սկզբունքով ապրող միջավայրերին: Ոչ հաճախ, սակայն երբեմն նրանք ապրում են նաև ծնողական ընտանիքից առանձին և ունեն սեփական բնակելի տարածքը: Այս աղջիկները պահպանողական միջավայրերի կողմից չեն պիտակավորվում, սակայն պահպանողական կենսակերպով ապրող տղամարդիկ նրանց չեն համարում ամուսնության համար պոտենցիալ թեկնածուներ, ուստի նաև չեն փորձում գործադրել թաղային և բակային միջավայրերին բնորոշ վերահսկողական պրակտիկաները: Սովորաբար այս աղջիկները թույլ չեն տալիս իրենց շրջապատի տղամարդկանց նաև վերահսկել իրենց անձնական կյանքը, «հոգալ» իրենց մասին, զբաղվել իրենց «անվտանգությամբ»: *Սրանք այն կանայք են, ովքեր իրենց դուրս են դնում պահպանողական փակ խմբերի նորմավորված սոցիալական տարածքի օրենքներից ու ապրում սեփական օրենքներով*: Հատկանշական է, որ պահպանողական միջավայրերը հանդուրժողաբար են վերաբերվում այս խմբի կանանց: Հիմնական գործոնները, որոնք հիմք են հանդիսանում այս հանդուրժողականության համար, այդ կանանց կրթական ու մասնագիտական բարձր ցենզն է, ֆինանսատնտեսական ինքնաբավությունը: Կարևոր է համարվում նաև այն, որ այդ կանանց զուգընկերները նույնպես կիրթ տղամարդիկ են, որոնց վարքագիծը չի խնդրականացնում այդ կանանց բարոյական նկարագիրը: Կարևոր գործոն է նաև, որ այդ կանայք հարևանական ու ազգակցական միջավայրում աչքի չեն ընկնում իրենց սեռական կյանքի տարբերությունը նշող առանձնահատուկ վարքագծով, ինչը համարվում է տարբեր տեսակի կասկածելի վարքագծի տեր տղամարդկանց հետ հաճախակի փոխհարաբերությունները, ոչ պատշաճ հագուկապը, ոգելից խմիչքների հանրայնորեն նկատելի չարաշահումը և այլն:

Ըստ գրանցված հետազոտական տվյալների՝ քիչ հանդիպող, սակայն գործող պրակտիկաներից է տարբեր տղամարդկանց հետ *հաճախակի ու փոփոխական սեքսուալ հարաբերությունների պրակտիկան*: Այս պրակտիկան բարոյականացվում է պահպանողական խավերի կողմից: Հասարակությունում փոքրամասնություն կազմող ոչ ավտորիտար, հումանիստական արժեհամակարգ կրող սոցիալմշակութային միջավայրերում նման պրակտիկաները համարվում են տվյալ կնոջ անձնական գործը, չեն բարոյականացվում և չեն պիտակավորվում: ***Այս պրակտիկաները կրողների համար մարդու արարքները բարոյականացնելու տեսանկյունից կարևոր է համարվում անհատի ոչ թե սեռական վարքագիծը, այլ մարդկային դրական հատկանիշները***:

Կանացի սեքսուալ պրակտիկաներում հատուկ տեղ է զբաղեցնում վճարովի կամ նյութական շահի դիմաց սեռական հարաբերությունների պրակտիկան: Այն հանդիպում է թե Երևանում և թե մարզային բնակավայրերում: Հասարակության հիմնական մասի

կողմից նման պրակտիկաները պիտակավորվում են որպես անբարոյական: Ըստ հետազոտության տվյալների՝ այն հասարակությունում առավել անընդունելի համարվող սեքսուալ պրակտիկայի ձևն է համարվում: Սրանց մեջ առանձնացվում են երկու հիմնական պրակտիկա: Դրանցից մեկն այն է, երբ կանայք պարզապես վճարի դիմաց սեռական ծառայություն են մատուցում տղամարդուն: Մյուսը՝ երբ ծանոթանում են տղամարդու հետ և ժամանացային վայրերում հյուրասիրության և նյութական բնույթ կրող որոշակի նվիրատվությունների դիմաց սեռական հարաբերության մեջ են մտնում տղամարդու հետ: Այս կանանց հանդեպ հատկապես սուր է պահպանողական և նրանց համակիր խմբերի բնակչության գնահատականը: Չնայած, ըստ հետազոտության տվյալների, վճարովի ծառայություններից հաճախ հենց նշված խմբի տղամարդիկ են օգտվում: Հումանիստական արժեհամակարգի խմբերի կողմից չնայած վճարովի սեռական ծառայությունների պրակտիկան համարվում է անընդունելի, սակայն բարոյական խիստ պիտակավորումներ, որոնք կանանց այս խմբի հանդեպ կարող են ձևավորել անհանդուրժողական և խտրական մոտեցում, քիչ է հանդիպում: Կանանց այս պրակտիկաների հանդեպ առավել հանդուրժողական են ֆեմինիստական խոսույթի ներկայացուցիչները, ովքեր պայքարում են նրանց հասցեին հնչեցվող պիտակավորումների դեմ, փորձում վերաձևակերպել հասարակությունում շրջանառվող ստորացուցիչ պիտակավորումներն ու լեզուն, հաճախ առաջարկելով պիտակավորումների փոխարեն «սեքս աշխատակիցներ» ձևակերպումը և հանդես գալիս նրանց իրավունքների պաշտպանությամբ, առաջնորդվելով այն թեզով, որ կնոջ մարմինը նրա սեփականությունն է, և նրա իրավունքն է սեփական մարմնի պրակտիկաների խնդիրը: Բոլոր պիտակավորումները համարվում են կնոջ սեռականանությունը օբյեկտացնող հայրիշխանական խոսույթի ու պրակտիկաների հետևանք:

2.3.2. Տղամարդկանց սեռական կյանքի պրակտիկաները

Բարոյականության նորմերի տեսանկյունից՝ բավականին տարբեր են մոտեցումները տղամարդկանց սեքսուալ պրակտիկաների հանդեպ: Դրանք պայմանականորեն կարելի է բաժանել մինչամուսնական, ամուսնական և արտամուսնական:

Ի տարբերություն կանանց՝ տղամարդկանց համար մինչամուսնական սեռական կյանքով ապրելը չի բարոյականացվում: Ավելին՝ այն տղաները, ովքեր առավել հարուստ սեռական փորձառություն ունեն, հասակակիցների միջավայրում ավելի բարձր վարկանիշ ունեն, իսկ նրանց փորձառությունը համարվում է նախանձելի: Ըստ

գրանցված նյութերի՝ սեռական փորձառությունը ուշ դեռահասության և վաղ երիտասարդության տղաների միջավայրում խիստ կարևոր գործոն է: Կախված այն բանից, թե տղան ինչպես է կազմակերպում իր սեռական հարաբերությունները և ընդհանրապես սեքսուալ վարքագիծը, լրջորեն ազդում է միջավայրում ունեցած նրա կարգավիճակի վրա: Այս առումով տղաների համար չափազանց կարևոր դեր է խաղում նաև այն, թե ինչ սեռական պրակտիկա ունեցող աղջիկների հետ են նրանք շփվում, ինչպես են վերաբերվում աղջիկների սեռական պրակտիկաներին և ինչպես են հարաբերվում նրանց հետ: Այս ամենը հստակ և խիստ նորմավորված է, և ըստ այդ նորմերի շարժվելը համարվում է առանցքային և նույնիսկ ճակատագրական 15-25 տարեկանների տարիքային միջակայքում գտնվող տղաների համար: Նշենք, որ այս տարիքային միջակայքում էլ տարբերակվում են տարիքային մի քանի շեմեր, ըստ որոնց նորմերն ու պրակտիկաները որոշ տարբերություններ են կրում: Առավել սուր է նորմերին հետևելու խնդիրը 16-21 տարիքային միջակայքում, ինչից հետո աստիճանաբար սրությունը սկսում է նվազել, և արդեն 25 տարեկանից հետո տղաները համեմատաբար ավելի քիչ են կախված լինում շրջապատում ընդունված նորմերի ճնշումից:

Տղաների միջավայրում ընդունված և շրջանառվող նորմերը հիմնականում վերաբերում են ըստ սեքսուալության հատկանիշի պիտակավորվող աղջիկների հետ հարաբերությունների կառուցման պրակտիկաների: Լայն առումով՝ տղաների մեջ ընդունված են աղջիկների հետևյալ պիտակավորումները.

- «Մաքուր» աղջիկ,
- «Նորմալ» աղջիկ,
- «Փչացած» աղջիկ:

«Մաքուր» աղջկա համբավ ունեն նրանք, ովքեր տղաների հետ հարաբերություններում խիստ դիստանցավորված են, չեն հաճախում ժամանցային միջավայրեր, չեն ունենում սիրահարական կապեր, դուրս չեն գալիս տղաների հետ զբոսանքների, սիրային հանդիպումների և կրթությունից կամ աշխատանքից դուրս ժամանակը անցկացնում են հիմնականում տանը կամ հարազատների միջավայրում, որտեղ նրանց վարքագիծը վերահսկելի է: Տարբեր տեղեր հաճախելու դեպքում նրանք միշտ ուղեկցվում են հոր, մոր, եղբայրների կամ արյունակից ազգականների կողմից: Նման աղջիկների մասին թաղամասի, բակի, կրթօջախի տղաները չեն կարող ասել որևէ բացասական խոսք այն դեպքերում, երբ այլ տղաներ հետաքրքրվում են այդ աղջիկներով՝ նրանց հետ ամուսնական նպատակով հարաբեություններ հաստատելու համար: Այս աղջիկները, որպես կանոն, որևէ տղայի կողմից իրենց հետ հարաբերություն

հաստատելու փորձի մասին տեղեկացնում են իրենց ընտանիքի կամ արյունակից տղամարդկանց, ովքեր էլ աղջկա հանդեպ «ոտնձգություն» կատարած տղայի հետ պարզաբանում են փոխհարաբերությունները: Միակ դեպքը, երբ թույլատրվում է այդ աղջիկներին հանդիպել և ժամադրության գնալ տղայի հետ, հնարավոր է նրա ընտանիքի տղամարդ անդամերի կողմից, եթե աղջկա հետ հանդիպում խնդրող տղան «հարյուր տոկոսանոց» խոսք է տալիս իր նկատառումների լրջության, այսինքն՝ ամուսնության նպատակով հանդիպելու ցանկության մասին: Եթե «հարյուր տոկոս» խոսք տված տղան դրժի իր խոսքը, ապա նա վտանգում է հայտնվելու շատ ծանր վիճակում, քանի որ «հարյուր տոկոս» խոսքից հրաժարվելու դեպքում նա կարող է աղջկա արյունակից տղամարդկանց կողմից ենթարկվել ֆիզիկական ծանր պատժի և «փչացվել»: Լինել «փչացած» նշանակում է լինել «խոսքից հետ կագնած», ինչը տղամարդու համար ամենից պախարակելի արարքն է համարվում, և նման տղամարդիկ դասվում են ամենացածր կարգավիճակում, որոնց հետ կարելի է վարվել ամենաստորացուցիչ ձևերով: Այսինքն՝ ***շատ ռիսկային է «մաքուր աղջկա» հանդեպ ոտնձգությունը, քանի որ նրա «մաքրությունը» վերահսկվում է ազգակից տղամարդկանց կողմից և պաշտպանված է տղամարդկային աշխարհում ընդունված նորմերով***: Այդ նորմերը խախտելու փորձ անող տղամարդիկ դիտվում են որպես ընդհանրապես տղամարդկանց միջավայրում ընդունված «ճիշտ» հասկացությունների հանդեպ անհարգալից վերաբերվող, ինչը թաղային նորմերով ապրող տղամարդկային միջավայրերում համարվում է անթույլատրելի ու պատժելի: Նկատենք, որ այս նորմերը ձևավորվել են ավանդութային հայկական հասարակության խորհրդայնացման և փոխակերպումների շրջանում, երբ թաղային միջավայրեր ներթափանցեցին քրեական աշխարհից փոխառված նորմերն ու արժեքները: Այդ է պատճառը, որ տղաների համար թաղային միջավայրերում «ճիշտ» և «սխալ» համարվող նորմերը, հասկացություններն ու դրանցից բխող վարքագծային պրակտիկաները հաճախ կոչվում են «գողական», իսկ այդ պրակտիկաներին ու հասկացություններին հետևողները՝ «գողականներ»:

Աղջիկների երկրորդ խումբը, որն ավելի շատ բնորոշ է Երևանում ապրող բնակչությանը, ընդունված է անվանել «նորմալ աղջիկ» ձևով: «Նորմալ» համարվում են այն աղջիկները, ովքեր սեռական վարքագծի առումով հետևում են ընդունված նորմերին և պահպանում են իրանց կուսությունը, սիրային և ժամանցային նպատակներով չեն շրջում տղաների հետ, բավական չափավոր են իրենց վարքագծով, սակայն «մաքուր» աղջիկների նման խիստ վերահսկողության չեն ենթարկվում և կարող են ազատ դուրս գալ զբոսանքի, ընկերուհիների և ընկերների հետ հաճախել դրական համբավ ունեցող երիտասարադական ժամանցային վայրեր, սրճարաններ և այլն: Այս աղջիկները չեն հաճախում «վատ համբավ» ունեցող ժամանցային վայրեր, պահպանում են դրսում

գտնվելու ժամային այն ընդունելի սահմանափակումները, որոնք կարող են համարվել վարքագիծը պիտակավորող երևույթներ: Վատ համբավ ունեցող ժամանցային միջավայրեր են համարվում այն տեղերը, որտեղ աղջիկները ծխում են, օգտագործում ալկոհոլային խմիչքներ, որտեղ մեծ է պատահական ծանոթությունների հավանականությունը:

Վաղ երիտասարդության տարիքում գտնվող տղաների միջավայրում ամենից վատ համբավ ուեցողը «փչացած աղջիկների» խումբն է: Այս խմբին դասվում են այն աղջիկները, ովքեր սեռական փորձառություն ունեն, կամ չնայած պահպանում են իրենց «կուսությունը», սակայն հայտնի են որպես տղաների հետ սեքսուալ այլ տիպի հարաբերություններ ունեցած աղջիկներ: Տղաների միջավայրում հատկապես պախարակելի են համարվում օրալ սեքսուալ փորձառությամբ հայտնի աղջիկները: Ըստ գրանցված հետազոտական նյութերի՝ հենց այս խմբին դասվող աղջիկների հետ հարաբերությունները կարգավորող նորմերին հետևելը կարևոր է համարվում տղաների համար իրենց կարգավիճակը շրջապատում «չփչացնելու» համար: Ըստ այդ ընդունված նորմերի, տղաների համար սեռական կապեր ունենալու հիմնական թիրախը համարվում են «փչացած» համբավ ունեցող աղջիկները կամ վճարովի սեքսուալ ծառայություններ մատուցողները: Վճարովի սեքսուալ ծառայություն մատոցողների հետ հարաբերության ձևը շատ հստակ է և համարվում է տղաների համար սեքսուալ կյանք վարելու ընդունելի ու տարածված պրակտիկաներից մեկը:

Առավել նորմավորված է «փչացած» պիտակավորվող աղջիկների հետ հարաբերությունները: Տղաների համար թույլատրելի է համարվում փոխհարաբերություն հաստատել նման աղջիկների հետ երկու դեպքում՝ սեքս անելու կամ ֆինանսական շահ ստանալու նպատակով: Ֆինանսական շահի տակ հիմնականում հասկացվում է այս կամ այն ձևով այդ աղջիկներից անհատույց գումար վերցնելը: Դա կարող է լինել ընկերական ձևը, պարտքով վերցնելն ու անընդհատ հետաձգելով պարտքը չտալը և այլն:

Ինչ վերաբերում է սեքս անելուն, ապա «փչացած աղջիկների» հետ սեքս անելը որևէ կերպ չի դատապարտվում, հակառակը՝ խրախուսվում է: Նման տղաները գովաբանվում են ընկերների միջավայրում: Սակայն, ինչպես գրանցված նյութերն են վկայում, կան հստակ սահմանափակումներ «փչացած» համարվող աղջիկների հետ սեքս անելու ձևերի մեջ: Խիստ տաբուացված է այդ աղջիկներին սիրահարվելն ու որպես սիրած աղջիկ նրա հետ սեքսուալ կապ ունենալը: Չի դատապարտվում գայթակղելու և սեռական կապի հասնելու նպատակով աղջկան սիրային խոսքեր ասելը, սակայն իրականում սիրահարվելը և նման աղջկան որպես սիրած աղջիկ ընկերների միջավայրում ներկայացնելը տղայի կարգավիճակի համար համարվում է

դատապարտելի ու վտանգավոր: «Փչացած» աղջիկների հետ սեքսով զբաղվելու տաբուներից է համարվում նաև նրանց հետ համբուրվելը, քանի որ ըստ տղայական միջավայրում ընդունված նորմերի չի կարելի համբուրվել աղջկա հետ, ով ենթադրաբար կարող է զբաղված լինել օրալ սեքսով մեկ այլ տղամարդու հետ: Դա կարող է դառնալ տղային «փչացնելու» պատճառ: Այսինքն, ըստ տղայական միջավայրերում ընդունված նորմերի, «փչացած աղջիկների» հետ սեքսի ժամանակ համբուրված կամ նրանց սիրահարվող տղաները ենթակա են միջավայրի կողմից «փչացման», ինչը տղաների համար ամենից անցանկալի բանն է, քանի որ թաղային և այլ տղայական միջավայրերում «փչացած» կարգավիճակը ստացած տղաների հետ թույլատրելի է անել ամեն ինչ, ենթարկել պարբերական ծաղրի և հոգաբանական ճնշումների, ծեծել, անվանարկել, գումար պահանջել և հետ չվերադարձնել և այլն:

Ինչպես նշեցինք, այս նորմերը տարածված են հիմնականում 15-25 տարեկան տղաների միջավայրում, որտեղ, ինչպես թույլ են տալիս ասել մեր հետազոտական նյութերը, ամենից ուժեղ են այսպես կոչված թաղային կյանքում մեծ ազդեցություն ունեցող «գողական» տղաների կողմից տարածվող ու պահպանվող նորմերը: Ինչպես նշվեց, այդ նորմերը տղաների աշխարհում պահպանվում են շատ խիստ ուժային ու հարկադրական մեթոդներով, և դրանց չենթարկվող տղաները պիտակավորվում են որպես տղայական աշխարհից դուրս գտնվողներ և կարող են ենթարկվել թաղային փակ խմբային միջավայրի օրենքներով ապրող տղաների ճնշումներին: ***Ճնշումները հատկապես ավելի կոշտ ձևերով են դրսևորվում, երբ թաղային կենսակերպով չապրող և նորմերին չհետևող տղաները ակնհայտորեն սկսում են տարբերվել***: Դա կարող է լինել տղայի համար ընդունելի չհամարվող հագուստի ոճը, գույները, սանրվածքը, շարժուձևը, երկար մազերը և այլն: Սովորաբար նման տղաներին պիատակվորում են որպես «լոխ», «հարիֆ», «ղզիկ» և այլ պիտակներով: Որպեսզի տղաները չենթարկվեն պարբերական ճնշումների, ստիպված են լինում ընդունել «գողականների» գերիշխանությունը և այս կամ այն չափով հետևել նրանց կողմից տարածվող նորմերին ու պրակտիկաներին:

Տղաների աշխարհում տիրապետող նորմերին ու պրակտիաներին հետևողները միատարր չեն: Գրանցված հետազոտական տվյալների հիման վրա առանձնացրել ենք հետևյալ խմբերը.

- Գողականներ
- Համակիրներ
- Հպատակներ
- Քամելեոններ
- Առանձնահատուկներ
- Դրսիններ

- Մարգինալներ:

«Գողականներ» համարվում են այն երիտասարդ տարիքի տղաները, ովքեր խորապես, համոզմունքի մակարդակում քրեական նորմերից բխող թաղային նորմերի կրողներն ու պահապաններն են: Նրանք ապրում են նորմավորված հասկացություններով (պանյատներով), որոնցով սահմանվում են վարքագծային ճիշտ ձևերը: Նրանք խմբավորված են և ունեն ուժային ճնշման լծակներ թաղում ապրող մյուս երիտասարդների վրա: Անհրաժեշտության դեպքում ***ֆիզիկական ճնշման ու վախի միջոցով նրանք իրենց օրենքներին ու ապրելակերպին են ենթարկում թաղում ապրող մյուս տղաներին***: Այլ թաղամասերի ու բնակավայրերի «գողականների» հետ նրանք ունեն սերտ կապեր և համագործակցում են ցանցային սկզբունքով: Այս ինքկազմակերպման մեխանիզմի շնորհիվ երիտասարդների այս խումբը իր պրակտիկաներն է տարածել ու դրանց միջոցով գերիշխանություն է հաստատել հանրապետությունում բնակվող երիտասարդ տղաների տարիքային խմբում և ենթակայական վիճակում է պահում մնացած բոլորին: Հատկանշական է, որ նրանք են նաև իրականացնում վերահսկողությունը աղջիկների վրա և ցանկացած տղա, ով փորձում է «ընկերություն» անել որևէ աղջկա հետ, պետք է ստանա ազդեցիկ տղաների աջակցությունը, հակառակ դեպքում տվյալ աղջկան հավանող մեկ այլ տղա նրան հարկադրաբար կվանի աղջկանից և ուժի ու ճնշումների ազդեցությամբ կստիպի հրաժարվել այդ աղջկա հետ հարաբերություններ հաստատելու մտքից: Այսպիսով՝ ստացվում է այնպես, որ *աղջիկների «շուկայում» մրցակցության համար տղաները կարիք ունեն դառնալ «շրջապատի տղա» և հետևել գողականների կողմից հաստատված թաղային նորմերին, որպեսզի անհրաժեշտության դեպքում «աղջկա» համար մղվող պայքարում ստանան շրջապատի տղաների աջակցությունը և ճնշումների հետևանքում ստիպված չլինեն հրաժարվել իրենց հավանած աղջկանից*: Ըստ գրանցված նյութերի՝ չնայած «գողականները» թաղերում մեծ թիվ չեն կազմում, սակայն նրանց ազդեցությունը մեծ է հարկադրանքի ենթարկելու լծակների շնորհիվ: Դրա շնորհիվ նաև նրանք թաղերում ունեն իրենց համակիրների շրջապատը, ովքեր չնայած գողական չեն, սակայն հարգանքով են վերաբերում գողականներին, հետևում են նրանց հաստատած «ճշտով ապրելու» նորմերին և պատրաստ են լինում տարբեր իրադրություններում նրանց իրենց աջակցությունը տրամադրելու: Համակիրների այս խումբը թվով արդեն բավական մեծ է և ըստ երիտասարդների վկայությունների կազմում է ավելի քան 25 %: Գողականների խմբի համակիրներին բնորոշում է այն, որ նրանք նույնպես աներկբայորեն ընդունում են այս խմբի դավանած արժեքները, առաջնորդվում նրանց հասկացություններով ու

նորմերով, սակայն իրենք պատրաստ չեն իրենց նվիրել «գողական» կյանքին և կյանքը անցկացնել կրիմինալ միջավայրերում:

Համակիրներին հետևում է այն երիտասարդների խումբը, ում խմբավորել ենք *հպատակներ* անվան տակ: Այս խմբի երիտասարդները հիմնականում ապրում են սովորական կյանքով, ոչ բոլոր գողական նորմերին ու պրակտիկաներին են ծանոթ, սակայն տիրապետում են այն հիմնականին, ինչը թույլ է տալիս նրանց կոպիտ վրիպումներ թույլ չտալ և անհրաժեշտության դեպքում ներկայանալ որպես գողական նորմերին ու «ճշտին» գիտակ, դրանց հանդեպ հարգանք ունեցող տղա: Հպատակները գողականների հանդեպ ցուցաբերում են հարգալից մոտեցում, ունեն ենթակայական կեցվածք, ընդունում են նրանց գերակայությունը, չեն փորձում հակադրվել կամ վիճարկել նրանց գերիշխանությունը, հետևում են տղայական աշխարհի փոխհարաբերությունները կարգավորող հասկացություններին ու նորմերին: Ըստ տարբեր գնահատականների, սրանք կազմում են երիտասարդների շուրջ 25-30 %-ը:

Մյուս խումբը պայմանականորեն անվանել ենք *քամելեոններ*: Սրանք կազմում են երիտասարդների շուրջ 20-25 %-ը: Սրանք հիմնականում այն տղաներն են, ովքեր կասկածանքով են վերաբերվում սահմանված նորմերին, շատ հարցերում համաձայն չեն թաղային ու պահպանողական մոտեցումներին: Հաճախ ունեն նույնիսկ քննադատական մոտեցում դրանց: Սակայն չեն արտահայտում իրենց կարծիքը և հաճախ պարզապես հարմարվում են ընդունված նորմերին՝ խուսափելով գողականների ու նրանց համակիրների կողմից պիտակավորվելուց: Հարմարվողականության ձևերից մեկն էլ միջսեռային հարաբերություններում նրանց սահմանած նորմերին հետևելն է:

Տղաների մեջ փոքրաթիվ խումբ են կազմում մեր կողմից «առանձնահատուկներ» անվանվածները: Ըստ հետազոտական նյութերի՝ նրանք շատ քիչ թիվ են կազմում՝ շուրջ 2-3 %: Դրանք հումանիստական արժեհամակարգ կրող տղաներն են: Նրանք աչքի են ընկնում իրենց ոճականությամբ, գողական ու քրեական նորմերի հանդեպ խիստ քննադատական մոտեցումով, աշխատում են չհետևել դրանց: Տարբերվում են նաև այսպես կոչված «փչացած» համարվող աղջիկների հանդեպ իրենց վերաբերմունքով: Նրանք դրական են գնահատում այդ աղջիկներին, նրանցից շատերի մասին ունեն դրական կարծիք: Չեն օբյեկտավորում այդ աղջիկներին որպես սեքսուալ օբյեկտ, այլ գնահատում են նրանց առաջին հերթին ըստ մարդկային հատկանիշների, դրական են գնահատում նրանց սեռական կյանքով ապրելու պրակտիկան, համարելով դա նրանց անձնական գործը:

Իրականում, ես շատ դրական են վերաբերում այն աղջիկներից շատերին, ում տղաները համարում են «փչացած»: Նորմալ մարդկային չափանիշներով իրենք պրոստո

ինքնուրույն անձնական կյանք վարող մարդիկ են, ովքեր չեն սպանում իրենց զգացմունքները, ազատ սիրահարվում են ու ուզում են նորմալ մարդու նման իրենց սիրած տղայի հետ սեքսով զբաղվեն: Էդ մեր միջավայրն ա վայրենի ու տգետ, որ այն աղջիկները, ովքեր չեն վախենում իրենց մարդկային զգացմունքներն արտահայտելուց, ազատ ապրելուց, գնահատվում են որպես «փչացած»: Անձամբ ես ձանձրույթից կմեռնեմ «մաքուր» աղջիկների հետ շփվելուց: Նրանք սարսափելի կոմպլեքսավորված են, կաշկանդված ու անհետաքրքիր: Իրականում փչացածը հենց այն մաքուր համարվող աղջիկներն են, ովքեր ճնշում ու սպանում են իրենց մեջ իրենց մարդկային զգացմունքները: Ոնց կարելի ա դրական գնահատել էն աղջկան, ով ոչնչացնում ա իր մեջ մարդկային դրական ապրումները: Դրանից ավելի անմարդկային բան ես չեմ պատկերացնում, որ նախ ծնողներն են նման ճնշման ենթարկում աղջկան, ու որ հետո էլ էդ աղջիկը ինքն իրեն: Իրականում ազատամիտ աղջիկները չեն փչացածը, այլ մեր հասարակությունն ա փչացած: Ես հենց դրա համար որոշել եմ գնալ Հայաստանից, որպեսզի ապրեմ նորմալ մտածող մարդկանց մեջ: Չեմ հավատում, որ Հայաստանը մի օր դուրս կգա էս հետամնացությունից: Ինչքան էլ ստեղ կյանքը լավանա, էս հետամնացության մեջ լավ ապրել հնարավոր չի: Ես եղել եմ արևմտյան տարբեր երկրներում: Գիտեք, մեկ մեկ ինձ թվում է, որ մենք ու իրենք ոչ թե տարբեր մշակույթների մարդիկ ենք, այլ տարբեր տեսակի կենդանական էակներ...:

Տղա, 21 տարեկան, ուսանող, Երևան:

Սակայն, այս ամեն ինչով հանդերձ, «առանձնահատուկները» թաքցնում են իրենց կարծիքը բացեիբաց հանրայնորեն արտահայտելուց՝ վախենալով ենթարկվել «փչացածի» կամ «լոխի» պիտակավորմանը: Նրանք առաջնորդվում են սեփական կարծիքը հանրայնացնելու աստիճանական ու կետային տակտիկայով: Սկզբում տղաների միջավայրում ձեռք են բերում «նորմալ» տղայի վարկանիշ, այնուհետև նրանց միջավայրում աստիճանաբար փորձում են ներկայացնել իրենց տարբերվող մոտեցումները՝ նպաստելով հասակակիցների միջավայրում կարծրատիպային մոտեցումների հանդեպ որոշ փոփոխություններ.

Ու հիմա ես լրիվ հանգիստ դրա մասին կարում եմ խոսամ: Ինչի՞, որովհետև ես սկզբից կարացել եմ իրանց մեջ բան անեմ, որ ես փչացած դեմք չեմ, ես «բարոյական» դեմք եմ ու նրա պատճառով, որ իմ պազիցիան սկզբից էղել ա բարձր՝ իրանց հավասար, հիմի ես կարամ իմ կարծիքն արդեն արտահայտեմ ու ոչ մեկ չքննադատի էդ:

Տղա, 20 տարեկան, ուսանող, Երևան

Տղաների միջավայրում մերժվածի ու մարգինալի կարգավիճակ է տրվում տարբեր ենթամշակույթների ներկայացուցիչներին: Այդպիսիք են համարվում հատկապես «ռոքերները», «էմոները» և նմանատիպ ենթամշակույթները: Մերժվածների մեջ են դասակարգվում նաև սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչները: Այս խմբերի ներկայացուցիչների հետ հիմնականում տղաները աշխատում են չառնչվել, քանի որ դա կարող է բացասաբար ազդել նրանց վարկանիշի վրա: Այս խմբերի ներկայացուցիչները երբեմն կարող են նաև ենթարկվել ճնշումների ու բռնության, եթե իրենց տեսքով դուր չեն գալիս պահպանողական մտածելակերպի տղաներին: Նրանց կարող են հայհոյել, անվանարկել, տարբեր վիրավորական արտահայտություններ հնչեցնել: Մարգինալ ենթամշակույթները վաղ երիտասարդական տարիքային խմբերում համարվում են ամենից խոցելին, ինչի գլխավոր պատճառներից մեկը համարվում է նրանց սեռական կյանքի պրակտիկաները, ստանդարտից խիստ տարբերվող արտաքինը, ոճը, արժեքները և ապրելակերպը:

Հետաքրքիր է, որ նկարագրված ծայրաստիճան սուր գնահատականները և անհանդուրժողական պրակտիկաները տարիքային այս խմբի տղաների մոտ վերարտադրվում են՝ չնայած այն բանին, որ տղաների մեջ զգալի թիվ են կազմում նաև նրանք, ովքեր իրականում այդ պրակտիկաների համակրողները չեն: Այս առումով շատ բնութագրական է հարցազրույցներից մեկում հնչեցված հետևյալ նկարագրությունը.

Չէ, լիքը մարդ ըտենց չի մտածում, լիքը մարդ ցույց ա տալիս, որ ինքը ըտենց մտածում ա, որովհետև ըտենց ա ընդունված ու ոնց որ, սենց մի հատ չջարդվող, ծանր բան կա, պատկերացրա սաղ սենց պահում են իրենց գլխավերևում, բայց սաղ գիտեն, որ իրանք հավայի են էդի պահում, բայց եթե ինչ-որ մեկը էդի չի պահում իրան սպանում են, դե փոխաբերական իմաստով: Այ էդ նույն պատճառով…:

Տղա, 19 տարեկան, Երևան, ուսանող:

Ըստ գրանցված հետազոտական տվյալների՝ 15-25 տարեկան երիտասարդների տարիքային խմբին բնորոշ վերը նկարագրած մոտեցումներն ու պրակտիկաները ավելի հասուն տարիքային փուլում կորցնում են իրենց սրությունը.

Հետո գալիս ա մի հատ պահ, որ եթե 24-25 ես արդեն, էդ վախտ արդեն լրիվ ազատ քո գործերով ես, էլ արդեն էդ սաղ պրծնում ա էլի, եթե ասենք դու դարմայեդ չես, որ 25 տարեկանում մեկա ինչ-որ հայաթ իջնում ես, բլոտ ես խաղում կամ չգիտեմ ինչ:

Տղա, 26 տարեկան, Երևան, անհատ ձեռներեց:

Ավելի հասուն տարիքային խմբերում տղաների վերաբերմունքը աղջիկների հանդեպ փոխվում է, և սեռական կյանքի փորձառություն ունեցող աղջիկների հանդեպ մոտեցումները դառնում են ավելի հանդուրժողական՝ ավելի քիչ բարոյականացնելով այն, կարևորելով ոչ այնքան սեռականության, որքան անհատականության գործոնը:

Կարելի է անել մի հետաքրքիր եզրակացություն, որ պահպանողական նորմերը, որոնք այսօր հաճախ ընկալվում և մեկնաբանվում են որպես «ազգային», երիտասարդության միջավայրում պահպանվում են հիմնականում այսպես կոչված «գողականների» ու նրանց համակիր և հպատակ խմբերի կողմից: Առաջիններն իրականում մեծ թիվ չեն կազմում: Սակայն *ընդհանուր գնահատականներով մեծ թիվ է կազմում դրանց համակիր ու հպատակ երիտասարդությունը*: Պատահական չէ, որ Ազգային Ժողովի պատգամավոր, մարդու իրավունքների պաշտպանությամբ հանդես եկող կազմակերպությունների դեմ իր ելույթներով հայտնի Գևորգ Պետրոսյանը «24News» հեռուստալիքին տված իր հարցազրույցներից մեկում հնչեցրել է այն միտքը, որ գողական աշխարհի ներկայացուցիչները իրականում շատ պարկեշտ ու հարգանքով մարդիկ են: «Այդ մարդկանց շնորհիվ է նաև, որ ՀՀ-ում ավանդական արժեհամակարգը պահպանվում է» ,- եզրափակել է իր միքտը ԱԺ պատգամավորը[11]: Ցավոք, այն ինչ այսօր մեկնաբանվում է որպես ազգային կամ ավանդական, իրականում դրա խեղաթյուրված և քրեական արժեհամակարգից թաղային միջավայրերի տղամարդկային հիերարխիաներ ներթափանցած նորմերն են, որի գլխավոր գործառույթը հասարակությունում այդ հիերարխիաներում ազդեցիկ դիրք ունեցող տղամարդկանց իշխանության պահպանումն է: Հատկանշական է, որ նախկին քաղաքական ռեժիմները թաղային մակարդակներում հենց այդ թաղային հեղինակությունների վրա էին հենվում: Ներկայիս նոր իշխանությունները, որոնք հանդես են գալիս քաղաքական իշխանության կառուցման ժողովրդավարական սկզբունքներով, չունեն թաղային միջավայրերում արմատավորված քրեական ենթամշակույթի վրա հենվելու անհրաժեշտությունը: Սա կարող է դրական ազդել բիրտ ուժի ու վախի վրա կառուցված այդ խմբավորումների ազդեցության և քրեականացված նորմերով ներծծված պատրիարխալ նորմերի թուլացմանը: Պատահական չէ, որ նոր իշխանություններին ներկայացվող մեղադրանքները հաճախ հանգեցվում են «ազգային» ավանդույթներից ու արժեքներից հրաժարվելուն, որը հնչեցվում է հենց նախկին իշխանությունների արբանյակ, պահպանողական արժեքների պաշտպանությամբ հանդես եկող խմբավորումների կողմից: Նման մեղադրանքներ հատկապես հնչեցվել Մել Դալուզյանի վերաբերյալ ֆիլմի նկարահանման հետ կապված, ինչի վերաբերյալ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը

[11] ԱԺ պատգամավոր Գևորգ Պետրոսյանի հարցազրույցը տես՝ https://www.24news.am/news/69364:

խորհրդանշական կարելի է համարել Հայաստանում հումանիստական արժեհակարգի կարևորման տեսանկյունից:

Արտամուսնական սեքսուալ պրակտիկաներ: Բարոյականության հետ կապված տղամարդկանց սեռական պրակտիկաների մի մեծ խումբ էլ վերաբերում է արտամուսնական կապերին: Նշենք, որ ըստ գրանցված նյութերի՝ տղամարդկանց միջավայրում այն շատ տարածված պրակտիկա է և լայն առումով արդարացվում է ինչպես հասարակական կարծիքում, այնպես էլ, որքան էլ որ հետաքրքիր է, նաև կանանց կողմից: Հետազոտությունը թույլ է տալիս ասել, որ տղամարդկանց արտամուսնական կապերը տարածված են հատկապես պահպանողական համարվող խավերում: Միայն տարիքային ավագ շերտում է, որ այն բացասաբար է գնահատվում, իսկ միջին և երիտասարդ շերտերում համարվում է «նորմալ»: Ավելին՝ շատ ամուսնացած կանայք գիտեն, որ իրենց ամուսինները արտամուսնական կապեր են ունենում այլ կանանց հետ, ու համարում են դա ընդունելի: Հիմնական բացատրությունն այն է, որ տղամարդը բնությունից ֆիզիկապես այլ բնույթ և ավելի ակտիվ սեռականություն ունի: Հատկանշական է, որ այս պրակտիկաները տարածված են իրենց ավանդական ու պահպանողական համարող միջավայրերում: Տղամարդու ու կնոջ սեռականությունների մասին այս կարծիքը և արտամուսնական կապերն արդարացնող պրակտիկաներն այն աստիճան են տարածված, որ դրանցով պահպանողական խմբերում մի տեսակ նորմալիզացված է համարվում տղամարդու արտամուսանական սեռական կյանքը:

Ըստ գրանցված նյութերի՝ կարելի է առանձնացնել մի քանի տեսակի արտամուսնական հարաբերություններ.

- Կանանց վճարովի սեռական ծառայություններից պարբերաբար օգտվելը,
- Այլ կանանց հետ անկանոն պատահական սեռական կապեր ունենալը,
- Ընտանիքից դուրս մշտական զուգընկեր (սիրուհիներ) ունենալը:

Հետաքրքիր է, որ առաջին երկու դեպքը պահպանողական խմբերում տարածված բարոյական խոսույթներում հիմնականում ընդունելի է համարվում: Իհարկե, դրա մասին բացեիբաց չի խոսվում, այլ հանդուրժվում է լռելյայն: Ի տարբերություն պահպանողական խմբերի՝ տղամարդու արտամուսնական սեռական հարաբերությունները նույնքան դատապարտելի ու ոչ բարոյական են գնահատվում քաղաքային ոչ պահպանողական խավերի միջավայրում, որտեղ կին–տղամարդ փոխհարաբերությունները ավելի հավասար և ոչ իշխանական դիրքերում են գտնվում, քան անհավասար:

Պահպանողական խավերում միակ անցանկալի դեպքը համարվում է այն, երբ տղամարդը արտամուսնական մշտական ու տևական կապ է հաստատում մեկ այլ կնոջ հետ, կապվում նրա հետ և դրանով սառում ու կտրվում իր ընտանիքից: *Այս մոտեցումը բացատրվում է նրանով, որ տղամարդը, բացի ֆիզիկականից, նաև էմոցիոնալ կապ է հաստատում այլ կնոջ հետ, ինչը հանգեցնում է սեփական ընտանիքից ու կնոջից հարաբերությունների աստիճանական սառեցման ու օտարման*:

Միգրանտական միջավայրերում բավական տարածված է նաև ընտանեկան ու ամուսնական կյանքի սեզոնայնությունը: Տղամարդիկ սեռական արտամուսնական հարաբերություններ են ունենում միգրացիոն փորձառության ընթացքում: Որոշ տղամարդիկ ունենում են նույնիսկ արտագնա մշտական զուգընկերներ, սիրուհիներ, որոնց հետ ապրում են քաղաքացիական ամուսնության սկզբունքով:

Լայն առումով՝ տղամարդու արտամուսնական հարաբերությունների հանդեպ առկա է ոչ քննադատական ու հանդուրժողական մոտեցում և այն, չնայած դրական գնահատականի չի արժանանում, սակայն միևնույն ժամանակ նաև չի բարոյականացվում:

2.3.3 Հասարակության մեջ առկա հիմնական խմբերը ըստ բարոյական ընկալումների և պրակտիկաների

Գրացված հետազոտական նյութերը թույլ են տալիս ասել, որ հայաստանյան ներկա հասարակությունը բարոյական ընկալումների, սեքսուալության բարոյականացման տեսանկյունից բաժանվում է մի քանի հիմնական խմբերի: Այդ խմբերին պայմանականորեն տվել ենք հետևյալ անվանումները.

- Ծայրահեղ պահպանողականներ,
- Պահպանողականների համակիրներ,
- Կասկածողներ,
- Տարբերներ (այլակենցաղներ),
- Հեղափոխականներ:

Առաջին խումբը, որն անվանել ենք *ծայրահեղ պահպանողականներ*, հիմնականում վերը նկարագրված բարոյական խոսույթի ամենից ծայրահեղ տարբերակի կրողներն են: Դրանց հիմնական հատկանիշներն են բարոյականությունը բացառապես կնոջ սեքսուալությանը հանգեցնելը, կնոջ օբյեկտացումը և կանացի սեքսուալությունը բացառապես տղամարդու սեքսուալության ռեալիզացմանը ծառայող երևույթ դիտարկելը, կնոջ ինքնուրույն սեքսուալության մերժումը և դրա ռեալիզացման

ձգտումը որպես «անբարոյական» պիտակավորելը: Տղամարդու գերիշխանությունից և սեքսուալ օբյեկտի կարգավիճակից դուրս և որպես ինքնուրույն սուբյեկտ հանդես գալու ցանկացած փորձ այս խմբերում գնահատվում է որպես բարոյական վարքագծի խախտում և համարվում է ճնշման ու հակադարձման ենթակա: Ճնշման ձևերը շատ տարբեր են, սկսած խոսքային պրակտիկաները, ամոթի, պատվի կոդեքսի, մեղքի զգացումի առաջացումը, անվանարկումը, պիտակավորումը և հոգեբանական բռության ենթարկելու այլ ձևերը, վերջացրած ֆիզիկական բռնության կիրառումը: ***Պահպանողական խմբերում կանայք նույնպես կանացի սեքսուալությունը օբյեկտացնող բարոյականության կրողներն ու պահապաններն են***: Հաճախ նրանք իրենք էլ կանանց նկարագրում են որպես տղամարդու սեքսուալության իրականացման օբյեկտ՝ կարևորելով ու առաջնային նշանակություն տալով տղամարդուն: Այս առումով հանդիպում են նույնիսկ արտառոց դրսևորումներ, երբ կանայք արդարացնում են իրենց իսկ ամուսինների արտամուսնական հարաբերությունները՝ բացատրելով դա տղամարդու բնությունից տրված սեքսուալ առավելությամբ: Այս խմբում շատ խիստ են գործում կնոջ սեքսուալության ռեալիզացումը արգելակող ու սահմանափակող վերահսկողական և պատժողական մեխանիզմները: Այստեղ ցանկացած փոքրիկ շեղում կնոջը կարող է պիտակավորել և ընդմիշտ «որակազրկել»՝ ճակատագրական ազդեցություն ունենալով նրա կյանքի հետագա ընթացքի վրա: ***Կնոջ կողմից սեռական հաճույքի ձգտումը այս խավերի կողմից նույնպես պիտակավորվում է որպես անբարոյականություն***: Կինն այստեղ դիտվում է բացառապես որպես մայր: *Մայրությունը սրբազնացվում է և կնոջ հիմնական առաքելությունը համարվում է այդ սրբազնացված դերի տակ մտնելը*: Կնոջ ողջ կյանքը դիտարկվում է որպես այդ գործառույթի իրականացմանը նախապատրաստում և իրականացում: Այդ պատճառով աղջիկները իրենց սեռահասունացման առաջին իսկ տարիներից նախապատրաստվում են սրբազնացված այդ գործառույթը կրելուն: Մայրության սրբազնացումը սեռական հաճույք ստանալը բարոյականացնում է որպես մեղք և պահպանողական խոսույթում պիտակավորվում որպես «անասնական հաճույք»: Իսկ կնոջ սեռական հաճույքի ձգտումը պիտակավորում է նաև որպես անբարո և մայրության հետ անհամատեղելի:

Երկրորդ խումբը անվանել ենք *համակիրների* խումբ: Սրանք հիմնականում համակրում են պահպանողական գաղափարներին որոշ վերապահումներով: Դրանց մոտ պահպանողական խոսույթները հիմնականում մնում են նույնը, սակայն զիջողականության ու հանդուրժողականության որոշ մոտեցումներ են նկատվում: Չնայած կարևոր է համարվում մինչամուսնական տարիքի աղջիկների սեռական զսպվածությունը և կուսության պահպանումը, սակայն ավելի հանդուրժողական է վերաբերմունքը հասակակիցների հետ փոխհարաբերությունների և ընդհանրապես

առօրյա պրակտիկաների վերահսկողության առումով: Այս խումբը ավելի շատ բնորոշ է քաղաքային բնակչությանը և հատկապես Երևան քաղաքին, որտեղ աղջիկների նկատմամբ ծնողական վերաբերմունքը շատ ավելի մեղմ է և հանրային այնպիսի միջավայրեր, որտեղ անձնական ճանաչողությամբ պայմանավորված տարածքներից բացի առկա են հանրային տարածքներ, որտեղ աղջիկների վարքագիծը չի գտնվում անընդհատ խիստ վերահսկողության ու պիտակավորման վտանգի տակ: Այստեղ կին-տղամարդ փոխհարաբերությունները նույնպես խիստ ուղղահայաց չեն, և տղամարդու ավտորիտարիզմը զուգակցվում է կնոջ նկատմամբ փոխադարձ հարգանքի վրա փոխհարաբերությունների կառուցմամբ: ***Նման հարաբերություններում կնոջ համար տղամարդը ավելի շատ հանդես է գալիս որպես ռացիոնալ, քան թե իռացիոնալ հեղինակություն***: Այսինքն տղամարդու հեղինակությունը կառուցվում է նրա արարքների, քան թե գերազանցապես ավանդույթով տրված գերիշխանության գործոնով:

Երրորդ խումբը բավական հետաքրքիր խումբ է: Այն անվանել ենք *կասկածողների* խումբ: Դրանք ավելի շատ հանդիպում են Երևանում, որոշ առումով միջին քաղաքներում: Դրանք հիմնականում այն մարդիկ են, ովքեր չնայած ընդունում են պահպանողական առավել հիմնարար նորմերը, որոնք վերաբերում են աղջկա կուսության, սեռական կյանքի չափավորության, ընտանիքում տղամարդու և կնոջ դերերի բաժանման հարցերին, սակայն իրենց շրջապատում դրանք խախտողների նկատմամբ պատրաստ են ոչ կոշտ կամ հանդուրժողական դիրքորոշում ցուցաբերել կապված դեպքի յուրահատկության հետ: Այս խմբի ներկայացուցիչները կասկածով են վերաբերում պահպանողական բարոյական նորմերին, եթե դրանք կարող են ձախողել և բացասաբար անդրադառնալ մարդու հետագա կյանքի վրա: Այսինքն՝ ***այստեղ հանդիպում ենք բարոյականության ավտորիտար-պահպանողական տիպից հումանիստականի անցման դեպքերի***, երբ մարդիկ կարծրատիպային մոտեցմամբ դեռևս կողմ են արտահայտվում պահպանողական բարոյական նորմերին, սակայն գիտակցական դատողականության մակարդակում կարևորում են անհատի երջանկության գործոնը:

Չորրորդ խումբն անվանել ենք *տարբերներ*: Տարբերներն, ըստ գրանցված նյութերի, նրանք են, ովքեր իրենց պրակտիկաներով նկատելիորեն տարբերվում են պահպանողական մեծամասնությունից: ***Տարբերների համար պահպանողականների բարոյական սկզբունքը առաջնային չի համարվում***: Այս խմբի մարդիկ բարոյականի ընկալումները կապում են մարդկային դրական հատկանիշների, այլոց հանդեպ չարիքներ չգործելու և բարիքի ստեղծման հետ: Այդ պատճառով բարոյականի բնորոշման համար առաջնային են համարում ոչ թե մարդու սեռական վարքագիծը, այլ նրա մարդկային դրական հատկանիշները: Այս խմբի մարդիկ խիստ զգուշավոր են

սեռական վարքագծի հիման վրա մարդկանց գնահատականներ տալուց: Էթիկապես ընդունելի չի համարվում ուրիշի անձնական կյանքի մանրամասների մեջ մտնելը, դրանով հետաքրքրվելը և այլոց հետ քննարկելը: Անձնական կյանքը համարվում է յուրաքանչյուրի անձնական գործը: Մյուս կարևոր տարբերությունը այն է, որ չի օբյեկտացվում կնոջ սեքսուալությունը և կին-տղամարդ հարաբերություններում հանդես են գալիս որպես հավասարության սկզբունքի պաշտպաններ: ***Այս խումբը չնայած չի ապրում պահպանողականների նորմերի համաձայն, սակայն միևնույն ժամանակ չի էլ պայքարում դրանց դեմ: Այն պարզապես ապրում է այլ բարոյական ընկալումների ու պրակտիկաների մակարդակում՝ դրանով իսկ ստեղծելով ապապահպանողական հանրային միջավայրեր***:

Վերջին խումբը պայմանականորեն անվանել ենք *հեղափոխականներ*: Սրանք այն խմբերն են, ովքեր ոչ միայն չեն ընդունում պահպանողականների բարոյական մոտեցումները, այլ պայքարում են կնոջը օբյեկտացնելու, կնոջ սեքսուալությունը տղամարդուն ծառայեցնելու, կին-տղամարդ անհավասարության և նմանատիպ այլ պրակտիկաների դեմ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է կանանց հանդեպ սեռական բռնություններին, ընտանեկան բռնությանը, կանանց իրավունքների պաշտպանությանը և կնոջը ստորադասող խոսույթներին ու պրակտիկաներին: Այս խումբը նաև աչքի է ընկնում այն բանով, որ ունի ինքնակազմակերպման հատկություն և հանդես է գալիս որպես ինստիտուցիոնալ առումով կազմակերպված կառույցների ձևաչափով, իրականացնում է բռնության պրակտիկաներն ու խոսույթները դատապարտող և կանանց պաշտպանությանը նվիրված ակցիաներ ու այլ տիպի գործողություններ:

Բարոյական խոսույթները և հասարակական համակեցության ներկա հիմնախնդիրները. Հումանիստական խոսույթի կարևորությունը (եզրակացության փոխարեն)

Ընդհանրացնելով վերլուծությունը՝ կարելի է անել հետևյալ դատողություններն ու եզրակացությունները:

Նախ, հետազոտությունը թույլ է տալիս ասել, որ այն պատկերացումները, թե բարոյական ընկալումների ու նորմերի տեսանկյունից հայաստանյան հասարակությունը միատարր է, չեն համապատասխանում իրականությանը: ***Արդի հասարակությունը որպես միատիպ ներկայացնելը խիստ արհեստական ու շինծու է***: Իրականում բարոյականության ընկալումներն ու պրակտիկաները, դրան վերաբերող խոսույթները արդի հայաստանյան հասարակությունում բավականին բազմազան են ու գտնվում են շարունակական փոխակերպումների մեջ: Դրանք տատանվում են ծայրահեղ պահպանողականից մինչև խիստ ազատականը, ծայրահեղ ավտորիտարից մինչև հումանիստականը: ***Հենց այս բազմազանությունն էլ կազմում է ներկայիս ազգային բարոյական ընկալումների տարրապատկերը***: Ստեղծված իրավիճակում ազգայինը բացառապես պահպանողական բարոյական նորմերին ու պրակտիկաներին հանգեցնելու և ազգայինը որպես պահպանողական ներկայացնելու փորձերը իրականության խեղաթյուրված ընկալման ու մեկնաբանության հետևանք են:

Հասարակությունում առկա բարոյականության ծայրահեղ տարբեր ընկալումներ ու վարքագծային պրակտիկաներ ունեցող խմբերի միջակայքում կան անցումային կամ խառը պատկերացումներ ու պրակտիկաներ: Վերջիններս թույլ են տալիս մեղմել ծայրահեղ բևեռային խմբերի միջև բախումները, չնայած դրանից լիովին խուսափել հնարավոր չի լինում: Բախումնային իրավիճակներ հիմնականում առաջանում են արդիական ու ծայրահեղ պահպանողական ընկալումներ ու պրակտիկաներ ունեցողների միջև: Հարկ է նշել, որ ***առավել անհադուրժողականն ու բախումնային իրավիճակներ ձևավորողը ծայրահեղ պահպանողական խմբերն են, ովքեր փորձում են սեփական ընկալումներն ու պրակտիկաները ներկայացնել որպես միակ ընդունելին ու ճիշտը և այդ դիրքից, բռնության ու ուժային ճնշումների միջոցով չեզոքացնել իրենցից տարբեր մոտացում ունեցողներին***: Նման ծայրահեղականացումը և ազգայինի «մոնոպոլիզացումը» վերջին շրջանում խորացնում է անհանդուրժողականությունը նորի ու նորամուծության հանդեպ: Խոսքը վերաբերում է բարոյական պահպանողական նորմերից տարբեր, հատկապես կնոջ սեքսուալությունը տղամարդկային գերիշխանությունից ազատելուն ուղղված, ընտանեկան կամ սեռական բռնությունների դեմ պայքարին:

Երկրորդ, այն բարոյական ընկալումներն ու վարքագծային պրակտիկաները, որոնք ծայրահեղ պահպանողական մի շարք խմբերի կողմից ընդունված է անվանել որպես «ազգային» կամ «ավանդական», իրականում խիստ տարբերվում են բարոյականության այն պատկերացումներից ու վարքագծային նորմերից, որոնք բնորոշ են եղել ազգագրական գրականության մեջ ավանդական համարվող 19-րդ դարի վերջ 20-րդ դարի սկզբին: Որպես ազգային մեկնաբանվող ներկայիս բարոյական նորմերը ձևավորվել են գերազանցապես Խորհրդային Միության շրջանում և հետագայում որոշ փոխակերպումներ ապրել հետխորհրդային տարիներին: Բովանդակային առումով դրանք պարունակում են մի քանի հիմնական բաղադրիչ: Դրանցում բավական մեծ է խորհրդային շրջանում արմատավորված, անհատի ազատականացման դեմ ուղղված քննադատական ու դատապարտող պրակտիկաների իներցիան: Շարունակվում է նաև հակարևմտական, այսպես կոչված «փչացած և կործանվող արևմուտքի» մասին խորհրդային շրջանում ձևավորված խոսույթը, որը ներկայումս փոխակերպվել է և հարմարեցվել հետսովետական ազգայնական խոսույթին: Նշված երկուսը միաձուլված են փակ համայնքային միջավայրերին բնորոշ հայրիշխանական նորմերի և պրակտիկաների հետ: Այդ ամենին սերտաճել են նաև քրեական փակ միջավայրերից ներթափանցած նորմերը, հասկացություններն ու պրակտիկաները՝ ձևավորելով ազգայինի քրեականացված նորմատիվային մի համակարգ, որը կառուցված է անհավասարությունների, ավտորիտար և կոշտ ուժի, վախի ու ենթակայության սկզբունքների վրա: Այս համակարգում կինն ամբողջությամբ ստորադասված է տղամարդուն, և այդ ստորադասումը ամրագրված է ընդունված բարոյական խոսույթներով, նորմերով ու պրակտիկաներով: Կինը չի դիտվում որպես ինքնիշխան սուբյեկտ, որը կարող է տնօրինել սեփական ճակատագիրը, ինքնուրույն, որոշիչ և տղամարդկանց հավասար դերակատարություն ունենալ հանրային կյանքում, հանդես գալ սեփական սեքսուալությամբ, այլ ոչ թե լինել բացառապես տղամարդու սեքսուալության ռեալիզացմանը ծառայող կամազուրկ օբյեկտ: Կնոջ սուբյեկտացումը, սեփական սեքսուալության հանդեպ իրավունքը, այն իրականացնելու ինքնուրույնությունը և ազատությունը այս միջավայրերում արգելված է, ավելին՝ տաբուացված է բարոյական նորմերով: Փորձ է արվում «ազգայինը» արհեստականորեն մեկնաբանել որպես առկա պահպանողական խոսույթի ու պրակտիկաների ամբողջություն: Այդ պատճառով բարոյական նորմերը այս միջավայրերում սահմանափակված են բացառապես կնոջ սեռական վարքագծի նորմավորման խնդրով: Իսկ մարդկային դրական հատկանիշները, հանրային բարիքի ստեղծմանն ուղղված վարքագիծը և այլ ռացիոնալ չափանիշներ ու նորմեր, որոնք թույլ են տալիս հասարակությանը ոչ արդյունավետ հարկադիր ենթակայական ու ավտորիտար

համակեցության ձևերից անցնել համագործակցային կամ հավասար հնարավորությունների սկզբունքի վրա կառուցված մրցակցային համակեցության ձևերին, այս խմբերի կողմից փորձ է արվում պիտակավորել որպես ապազգային, «այլասերված» և ներկայիս հայաստանյան հասարակության իրականության բազմազան պատկերը աղավաղող այլ իռացիոնալ ձևակերպումներով՝ փորձ անելով սահմանափակել բարոյական ընկալումների ու վարքագծային պրակտիկաների ոլորտում նրանց մասնակցության ու դերակատարության հնարավորությունը: Սա շատ բացասական և դեստրուկտիվ երևույթ է, քանի որ փորձ է արվում անտեսելու ազգայինի իրական տարրապատկերը, մերժելու դրա բազմազանությունը, դրանում առկա պրոգրեսիվ ու ռացիոնալ ուժերին և ազգայինը հանգեցնելու իռացիոնալ և անառողջ պահպանողական նորմերին ու պրակտիկաներին:

Ներկայիս պահպանողական համարվող և հասարակությունում առավել տիրապետող բարոյական ընկալումները և նորմերը հիմնականում կառուցված են կանանց սեռականության և դրա ռեալիզացումը տղամարդու սեքսուալությանը ստորակարգող բարոյական խոսույթների վրա: ***Կանանց սեքսուալ վարքագծի բարոյականացումը կառուցվում է նրանց սեռական ինքնուրույն կյանք ունենալու իրավունքի արգելքների վրա***: Արմատական գործոն է համարվում կնոջ ոչ միայն մինչամուսնական սեռական հարաբերության արգելքը, այլ նույնիսկ սեքսուալությունը ընդգծող ցանկացած վարքագծային պրակտիկա: Կնոջ սեքսուալությունը այս ընկալումների ու պատկերացումների համատեքստում ամբողջությամբ օբյեկտացված է տղամարդու սեքսուալությանը և դիտարկվում է որպես տղամարդու սեքսուալության իրականացմանը ծառայող երևույթ: Այս միջավայրերին բնորոշ են բազմաթիվ արգելքներ ու տաբուներ, որոնց միջոցով տղամարդկանց կողմից կնոջ սեռական կյանքը վերահսկողության է ենթարկվում: ***Տղամարդկանց միջավայրում կանանց սեռական վարքագծի վերահսկումը համարվում է հանրային միջավայրերում տղամարդու կարգավիճակի և պատվարժանության ձևավորման կարևոր գործոններից մեկը***: Այս առումով պահպանողական միջավայրերը բնորոշվում են կնոջ հանդեպ տղամարդու կողմից բռնության գործադրման ամենից փափուկ՝ հոգեբանականից, մինչև ամենից կոշտը՝ ֆիզիկական բռնության պրակտիկաներով: Բազմաթիվ են պիտակավորումները, որոնք կարող են տրվել կնոջը սեռական վարքագծի համար, որոնք կարող են դառնալ կնոջ թիրախավորման, համընդհանուր պախարակության և նույնիսկ բռնության կիրառման պատճառ: Այս միջավայրերում տիրապետող անմարդկային բարոյական նորմերը կնոջը կարող են այն աստիճան պիտակավորել և այնպիսի գործողություններ թույլ տալ պիտակավորված կանանց հանդեպ, ինչը կարող է դառնալ խորը ընկճախտի, վախերի և հոգեբանական այլ ծանր ապրումների պատճառ: Այս միջավայրերում

աղջիկների ու կանանց սեռական կյանքի հանդեպ ճնշումների, արգելքների ու վերահսկողության հետևանքում խեղվում են մարդկային ճակատագրեր: ***Շատերն ապրում են խորը ողբերգություն, կրում հոգեբանական խեղումներ, կորցնում կյանքում երջանիկ լինելու ձգտումը և ենթարկվում շատ այլ անմարդկային հոգաբանական և նույնիսկ ֆիզիկական զրկանքների***:

Փաստացիորեն, պահպանողական խավերում ձևավորվել է մի իրավիճակ, երբ կանայք օտարված են բարոյական խոսույթների, նորմերի ու պրակտիկաների ձևավորման, դրանց վերաիմաստավորման և արդիական պայմաններին դրանց հարմարեցման գործընթացներին մասնակցությունից, ինչը հանգեցրել է այն բանին, որ այդ խմբերում բարոյական նորմերն ու պրակտիկաները ձևավորվում են բացառապես տղամարդկանց կողմից: ***Հատկանշական է, որ թաղային, ազգարյունակցական և այլ տիպի փակ խմբային համակեցությամբ ապրող պահպանողական միջավայրերում բավական ուժեղ է քրեական հեղինակությունների ու քրեական աշխարհի ներկայացուցիչների իշխանությունը***: Դրա հետևանքով թաղային միջավայրերում համակեցության նորմերի, տղաների աշխարհում հիերախիաների ձևավորման, կանանց սեռական վարքագծի հանդեպ տղամարդկային վերահսկողության պրակտիկաներում և, ընդհանրապես, կնոջ սեռականության բարոյականացման նորմերի ձևավորման վրա բավականին մեծ է քրեական նորմերի ու հասկացությունների ազդեցությունը: Դրանց հետևանքով ***ձևավորվում են հատկապես երիտասարդ աղջիկների ինքնուրույնությունը ծայրահեղորեն պիտակավորող, նրանց օտարման ու դեպի լուսանցք մղման պրակտիկաներ***: ***Թաղային միջավայրերում բարոյական հասկացությունների ու նորմերի քրեականացումը հատկապես բացասաբար է ազդում վաղ երիտասարդական տարիքում գտնվող տղաների վարքագծի, բարոյական ընկալումների և սեռերի փոխհարաբերությունների մասին պատկերացումների վրա***: Խորքային առումով պահպանողական և դրանց համակիր հասարակական միջավայրերում բարոյականության ընկալումների, հիմնարար խոսույթների ու պրակտիկաների հիմքում ընկած են ոչ թե մարդկային դրական հատկանիշները և բարիքի ձևավորմանն ուղղված պրակտիկաները, այլ դեստրուկտիվ, իռացիոնալ հասկացությունները, որոնք լայն առումով ծառայում են իռացիոնալ ավտորիտարիզմի ձևավորմանը: ***Իսկ նման հասարակական միջավայրերում ամենից բարձր կարգավիճակը տրվում է հենց հանրային բարիքի ձևավորման տեսանկյունից ամենից դեստրուկտիվ դերակատարում ունեցող, քրեական միջավայրերին հարող և նմանատիպ հասկացություններով առաջնորդվող տղամարդկանց:*** Սա մեր հասարակության առջև կանգնած լրջագույն խնդիրներից է:

Մեր հասարակության պահպանողական միջավայրերում բարոյականության ընկալումներն ու նորմերը ոչ միայն հիմնականում չեն համապատասխանում այսօր աշխարհում համամարդկային համարվող պատկերացումներին, այլև հաճախ հակադրում են դրանք այնպիսի համարդկային արժեքների, ինչպիսիք են հումանիզմը, ազատությունը, ստեղծարարությունը, հավասարությունը, արդարությունը, զարգացումը, նորարարությունը և այլն: Պահպանողական բարոյական ընկալումներում հատկապես դատապարտելի արժեքների թվում է ***ազատությունը***: Ազատության գաղափարը, որը մարդկությանը հուզած ամենից խորքային գաղափարներից է, և որի հիմքում դրված է անհատի ստեղծագործական ունակությունների բացահայտման, զարգացման ու ռեալիզացման, հասարակական բարիք ստեղծելու միտքը, պահպանողական խմբերի կողմից խեղաթյուրվում, նեղացվում և հանգեցվում է կնոջ սեռական վարքագծի ազատությանը, ինչը բարոյական տեսանկյունից համարվում է խիստ պախարակելի ու անընդունելի արժեք:

Չնայած այս ամենին՝ հասարակության տարբեր խմբերում տեղի են ունեցել խորքային փոխակերպումներ: Այսօր հատկապես երիտասարդության ու միջին տարիքային միջավայրերում բավական մեծ ազդեցություն ունեն նաև այն հասարակական խմբերը, ում համար կարևոր բարոյական նորմերը կապվում են ոչ թե անձի սեռական կյանքի խնդրականացման, այլ մարդկային ստեղծարար հատկանիշների ու հանրային բարիքի ձևավորմանն ուղղված կոնստրուկտիվ գործունեության գնահատականի հետ: Այդ խմբերի մեջ ***բարոյականությունը ձևակերպվում է որպես մարդու այնպիսի դրական հատկանիշների հավաքածու ինչպիսիք են ազնվությունը, մյուսներին վնաս չհասցնելը, բարիքներ գործելը, օգնելը, վստահելը, ուրիշի անձնական կյանքին չմիջամտելը, չգողանալը, բռնություն չգործադրելը, չխաբելը, կարեկցելը, բարությունը և նման այլ դրական հատկանիշներ***: Այս խմբին պայմանականորեն անվանում ենք *հումանիստական կամ քաղաքացիական բարոյականության* կրողներ: ***Այս մոտեցումն ունեցողները, ցավոք, հասարակության մեջ մեծամասնություն չեն կազմում, սակայն կարելի է ասել, որ ներկայումս նրանք ոչ թե մարգինալացած, այլ ազդեցիկ փոքրամասնություն են***: Այս խմբի մարդիկ հիմնականում աչքի են ընկնում կրթական ու մասնագիտական միջինից բարձր որակներով, հանրային կոնստրուկտիվ գործունեությամբ, քաղաքացիական տեսանկյունից ակտիվ են, ձգտում են անտարբեր չմնալ և մասնակցել հանրային նշանակության խնդիրների քննարկմանն ու լուծմանը, ազդում են միջավայրի ու ընդհանրապես հասարակական կարծիքի փոխակերպմանը: Կարևոր է նկատել, որ ***«Թավշյա հեղափոխությունից» հետո հումանիստական բարոյականությունը ներկայացնող խմբերի ներկայացուցիչները մեծ մասնակցություն ունեցան քրեակլանային ավտորիտար բարոյականության***

սկզբունքների վրա կառուցված նախորդ իշխանությունների քաղաքական հեգեմոնիայի տապալմանը ու ներկայումս գտնվում են քաղաքական իշխանության տարբեր ինստիտուտներում, ինչը կարող է դրական ազդել առկա հիմնախնդիրը լուծելու գործի վրա:

Ինչպես նշվեց, ինքնուրույն, ազգարյունակցական ու թաղային-համայնքային վերահսկողությունից դուրս և ազատ ապրող կանայք պահպանողական հատվածի կողմից ենթարկվում են զանազան պիտակավորումների, օտարման, երբեմն նաև բռնության ու տարատեսակ ճնշումների այն դեպքում, երբ հասարակության ***հումանիստական բարոյականությամբ առաջնորդվող խմբերի ներկայացուցիչների համար մարդու անձնական կյանքին, այդ թվում և կանանց անձնական կյանքին միջամտությունը համարվում է էթիկապես անընդունելի***: Հասարակության այս հատվածի համար կնոջ սեքսուալության տաբուների հիմքի վրա ստեղծված բարոյական նորմերն ու պրակտիկաները հակասում են հասարակության զարգացման, առաջադիմության խնդիրներին, քանի որ սահմանափակում են մարդու ազատ ինքնաիրականացման հնարավորությունը: Ավելին՝ բարոյականությունը հանգեցնելով բացարձակապես կնոջ սեքսուալության հանդեպ տաբուներից բխող վարքագծային նորմերի ու պրակտիկաների՝ անտեսվում է բարոյականության խնդրի համար հիմնարար ու համամարդկային այնպիսի չափանիշները, համաձայն որոնց բարոյականությունը դիտվում է որպես հանրային բարիքի ձևավորման ու պահպանման հասարակական համակեցության նորմերի ամբողջություն: Վերջինիս համաձայն բարոյականության հիմքում ընկած են այնպիսի կարևոր մարդկային հատկանիշներ, ինչպիսիք են ազնվությունը, արդարությունը, ստեղծարարությունը, փոխօգնության ու փոխզիջման պատրաստականությունը, փոխվստահությունը, չգողանալը, չխաբելը և այլ դրական հատկանիշներ: Հետևաբար, բարոյական մարդ է համարվում ոչ թե սեքսուալ կյանքի որոշակի նորմերին հետևողը, այլ նշված դրական հատկանիշներ կրողն ու դրանցից բխող վարքագծային պրակտիկաները: Մեզանում ***պահպանողական խավերի ճնշման տակ այն աստիճան են աղավաղված ու խեղաթյուրված բարոյականության ընկալումները, որ կարող են ազնիվ, բարի և մարդկային դրական շատ հատկանիշներով օժտված կնոջը համարել անբարոյական, եթե նա չի պահպանում սեքսուալ կյանքի ընդունված տաբուներն ու սահմանափակումները***: Իսկ մարդը, որ կարող է լինել գող, հանցագործ, թաղային միջավայրում կարող է նկարագրվել որպես «հարգված», «շնորհքով» և այլ դրական բնութագրումներով, նույն, պահպանողական բարոյական նորմերի հետևանքով երիտասարդության միջավայրում առավել խրախուսելի վարքագիծն ու բարձր կարգավիճակ ունեն այն տղաները, ովքեր ամենից հակահասարակական են, վնասարար, ագրեսիվ, դեստրուկտիվ ու չար, հենց նրանք են

համարվում աղջիկների սեքսուալ վարքագիծը գնահատողներն ու բարոյական չափանիշները պահպանողները: Նրանք են նաև վերահսկում երիտասարդ տղաների վերաբերմունքը աղջիկների հանդեպ և պարտադրում բոլոր երիտասարդ տղաներին պիտակավորել իրենց սահմանած չափանիշներով «սխալ» վարքագիծ ունեցող աղջիկներին: Հետազոտությունը թույլ է տալիս ասել, որ հաճախ պիտակավորվողները ամենից կիրթ, ինքնուրույն, ստեղծարար, դրական մարդկային հատկանիշներով օժտված աղջիկներն են, ովքեր չեն ենթարկվում պահպանողական խմբերի սահմանած նորմերին ու չափանիշներին և պիտակավորվելով ոչ բարոյական՝ հայտնվում են լուսանցքային գոտում: Քրեական նորմերից փոխառված հասկացություններով ապրող և տղաների միջավայրում գերիշխանություն ունեցող վերը նշված երիտասարդ տղաների խմբերի կողմից պիտակավորվում, բռնության ու ճնշումների են ենթարկվում նաև այն տղաները, ովքեր հարգալից են վերաբերվում պահպանողականների կողմից պիտակավորված աղջիկներին: Այդ տղաները կարող են ենթարկվել ճնշումների ու ստորացումների: Հետազոտական տվյալների հիման վրա վստահորեն կարող ենք ասել, որ ճնշման ենթարկվողները հասարակական բարիքի ձևավորման տեսանկյունից առավել հեռանկարային ու օժտված, բարեկիրթ, կոնստրուկտիվ ու դրական հատկանիշներով բնութագրվող տղաներն են: Իսկ բարոյականության պահապանների դերում են հայտնվում ավտորիտար բնավորությամբ, բռնարար, տգետ, հաճախ քրեական հասկացություններով առաջնորդվող, հակահասարակական, հանրային բարիքի ստեղծման մեջ ոչ միայն ներդրում չունեցող, այլ հակառակը՝ այդ բարիքի ձևավորման տեսանկյունից բացասական ու դեստրուկտիվ դերակատարություն ունեցող տղաների խմբավորումները:

Ստացվում է այնպես, որ ***բարոյական չափանիշները վերահսկվում են մարդկային հատկանիշների և հասարակական բարիքի ձևավորման տեսանկյունից առավել անբարոյական խմբավորումների կողմից***: Հատկանշական է, որ պահպանողական տղամարդկանց աշխարհում գերիշխանություն ունեցող այս խմբավորումների պարագլուխները և նրանց շրջապատող արբանյակներն էլ ապրում են առավել ցոփ և անբարո կյանքով: Ստացվում է այնպես, որ ***մեր հասարակության պահպանողական հատվածը բարոյականության տեսանկյունից հայտնվել է շուռ տրված հայելիների իր ստեղծած աշխարհում, որտեղ առավել դեստրուկտիվ ուժերը անընդհատ վերարտադրում են իրենց իշխանությունը, բարոյականության ներկայիս ընկալումներն ու պրակտիկաները հարմարեցնելով հենց իրենց գերիշխանության պահպանման խնդրին***:

Հենվելով, հետազոտության տվյալների վրա և եզրափակելով՝ մեկ անգամ ևս կցանկանայինք շեշտել, որ ***հասարակությունում ստեղծված խնդրահարույց իրավիճակի***

գլխավոր պատճառներից մեկը բարոյական առկա խեղաթյուրված ընկալումներն են, որոնցում հիմնարար են համարվում ոչ թե մարդկային դրական ու ստեղծարար հատկանիշները և հանրային բարիքի ու համագործակցային մթնոլորտի ձևավորմանն ուղղված խոսույթներն ու պրակտիկաները, այլ բարոյականության սեռականացված ընկալումները, որի պահապան հրեշտակները քրեականացված երիտասարդության իշխանության տակ և տիրապետող հասկացությունների համաձայն ապրող երիտասարդ ու միջին տարիքի տղամարդ հատվածն է:

Այս առումով՝ նշված հիմնախնդիրը դուրս է գալիս զուտ բարոյականության և սեքսուալության նեղ խնդիրներին վերաբերող շրջագծից և դառնում հասարակության հետագա զարգացումը արգելակող, կոնստրուկտիվ ուժերի ինքնարտահայտման ազատությունը կաշկանդող և ընդհանրապես՝ միջազգային մակարդակով ինտեգրման ու մրցունակության հասարակական ներուժը դեստրուկցիայի ենթարկող երևույթ: Նման իրավիճակում այս հիմնահարցը լրջորեն խնդրականացվելու և պետական մտահոգության ու քաղաքականությունների մակարդակում լուծումներ գտնելու անհրաժեշտություն ունի: